# ԺԱՄԱԳԻՐՔ

## ՍՐԲՈՒՀԻՈՅ ԿՈՒՍԻՆ

# ՄԱՐԻԱՄՈՒ

## ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ ·

Եւ Նշխարեաց · Եօթն Սաղմոսքն
Աղաչաւորութիւն · Չարչարանաց
Տն մերոյ · Երգք Հոգեւ-
որք · և այլք
Աղօթք ։

733



Ի ՎԵՆԵՏԻԿ ։ 1706.
Ի Տպարանի Անտոնի Պորտօլի ·
Մեծաւորաց Հրամանաւ ։

Ի կոնդակաց Սրբազանի
Տն մերոյ

# ՓԱՓԻՆ ՓԻՈՍԻ

Հինգերորդի, վն տօնից դժա-
մբրդութեան երանուհւոյ
Կուսին Մարիամու։

ԵԻ զի մեզ՝ հանապազօրեայ կամի և ջանին առաւել առ-փրկական, պարտիկ մերոյ ժամերգութեան երանու-հւոյ Կուսին Մարիամու, և աղօթից յինքեան նորագրու-նակեցելոց ընթերցումն և կիրա-ռութի առաջիկի, յԱմենակալօ-զն ԱՅ ողորմութենէն, և երա-նեցելոց Պետրոսի և Պօղոսի Առա-քելոցն նորին իշխանութբն քաջա-լերեալք, Ամենեցուն և իւրաքանչիւ-րոյ. որք այսր կերպի ժամեր-գութեն չեն պարտաւորեալք, քանիցս անգամ զայս այսպէս ի հրամանէ-մերմէ նորոգեցեալս, զամենայն յի-սուն։ Իսկ որք զինչ ժա-մերգութիւնն, որ ի սոյն գրքոյ պարփակեցեալ կայ զուգէ յիսուն,

որք զԼ.օթն Սողոմոնի, կամ զՍա-
ղ.ծանակութեան նմանութեան ի նոյն
գիրս պարափակեցուցանէ, զայսպա-
ռասուն և որք զինն ի խորհրդոյն
խորհրդածութիւն ի նոյն իսկ հանդի-
սարար պատմուածուցէ, ձեռնա-
ռնկօրէն առողջն, զայն հոգե-
ւորն անւոր, յիշելանց զգե-
ցեալ սարակասանաց տարփածո-
ւթեան ի Տր Թագուհին չորեքին:
Իսկ պայծառանալեցելոյն զայնամի
և նեթ զնեթգրութեան չորեքին,
որք կենդանեաց միջոցք ի մէջ նորո-
գութե նորոյ կարգաւորս ժամա-
նակի գրեանք նշանակեցուցան
էզին, և այսպիսի կերպի երանու-
հւոյ Կոյսին Մարիամու, կամ
Ներեցելոյ պաշտօնի, կամ զԼ.օթն
Սողոմոնի, կամ զՍոփիածնականն
առաջնոյն չորեքին:

# ՅՈՒՆՎԱՐ։

| | | | |
|---|---|---|---|
| ա | ա | Թլփատութիւն Տն. | բ.է. |
| բ | բ | | |
| գ | գ | | |
| դ | դ | | |
| ե | ե | Վիճիլա. | |
| զ | զ | Յայտնութիւն Տն. | բ.է. |
| է | է | | |
| ա | ը | | |
| բ | թ | | |
| գ | ժ | Գունդիսաւորի խմբին. | |
| դ | ժա | | |
| ե | ժբ | | |
| զ | ժգ | | |
| է | ժդ | | |
| ա | ժե | Անուն Յիսուսի։ | |
| բ | ժզ | | |
| գ | ժէ | Անտոնի Աբբայի. | |
| դ | ժը | Աթոռ Պետրոսի ի Հռոմ։ | |
| ե | ժթ | | |
| զ | ի | Ֆաբիանոսի և Սեբաստիանի. | |
| է | իա | Ագնէսի կուսին և մրն. | |
| ա | իբ | Վինչենցիոսի, մրն. | |
| բ | իգ | Նշանադրութեան կուսին. | |
| գ | իդ | Տիմոթէոսի եպս. և մրն. | |
| դ | իե | Դարձումն Պօղոսի առաքելոյ. | |
| ե | իզ | Պօղիկարպոսի եպս և մրն. | |
| զ | իէ | | |
| է | իը | Անդրադարձութիւն սրբոյն Ագնէսի | |
| ա | իթ | Ֆռանչիսկոսի Սալէզի եպսն. | |
| բ | լ | Մարտինեայ կուսին և մրն. | |
| գ | լա | Պետրոսի Նօլասքոսի, և Յուլ. | |

## ՓԵՏՐՎԱՐ.

| | | |
|---|---|---|
| դ | ա | Իգնատիոսի մրտ. |
| ե | բ | Տեառն ընդառաջ. |
| զ | գ | Վլասիոսի եպս., և մրտ. |
| է | դ | |
| ա | ե | Աղաթեայ կուսին և մրտ. |
| բ | զ | Դորոթեայ կուսին, և մրտ. |
| գ | է | Ռոմուալդոսի Աբբային. |
| դ | ը | |
| ե | թ | Ապողոնիայ կուսին և մրտ. |
| զ | ժ | Սքոլաստիկեայ կուսին. |
| է | ժա | |
| ա | ժբ | |
| բ | ժգ | |
| գ | ժդ | Վաղենտինոսի մրտ. |
| դ | ժե | |
| ե | ժզ | |
| զ | ժէ | |
| է | ժը | |
| ա | ժթ | |
| բ | ի | |
| գ | իա | |
| դ | իբ | Նստումն Պետրոսի Առաքելոյ Անտիոքիա. |
| ե | իգ | |
| զ | իդ | Մատաթեայ Առաքելոյն. |
| է | իե | |
| ա | իզ | |
| բ | իէ | |
| գ | իը | |

# Մ Ա Ր Տ.

| | | |
|---|---|---|
| դ | ա | Ալբինոսի եպս. և խոստ. |
| ե | բ | |
| զ | գ | |
| է | դ | Կազիմիրոսի խոստ. |
| ա | ե | |
| բ | զ | |
| գ | է | Թօմայի Աքուինացւոյ խոստ. |
| դ | ը | Ֆրանչիսկա Հռովմայեցւոյ սրբոյն . |
| ե | թ | |
| զ | ժ | |
| է | ժա | |
| ա | ժբ | Գրիգորի Պապին խոստ. |
| բ | ժգ | |
| գ | ժդ | |
| դ | ժե | |
| ե | ժզ | |
| զ | ժէ | Պատրիկիոսի եպս. և խոստ. |
| է | ժը | |
| ա | ժթ | Յովսէփու առն Մարիամու . |
| բ | ի | Յովակիմայ հօրն Մարիամու. |
| գ | իա | Բենեդիկտոսի Աբբային . |
| դ | իբ | Ամբրօզիոսի , խոստ. |
| ե | իգ | |
| զ | իդ | |
| է | իե | Աւետիք Աստուածածնին . |
| ա | իզ | |
| բ | իէ | |
| գ | իը | |
| դ | իթ | |
| ե | լ | |
| զ | լա | |

# ԱՊՐԻԼ.

| | | |
|---|---|---|
| է | ա | |
| ա | բ | Փրանչիսկոսի Բաւղացւոյ խոստ. |
| բ | գ | |
| գ | դ | Ամբրոզիոսի խոստովանողի. |
| դ | ե | Վինչենցիոսի խոստովանողի. |
| ե | զ | |
| զ | է | |
| է | ը | |
| ա | թ | |
| բ | ժ | |
| գ | ժա | |
| դ | ժբ | |
| ե | ժգ | Մարգարտայ կուսին մեր կրօն. |
| զ | ժդ | Տիբուրտիոսի, և Վալերի. |
| է | ժե | Հերմենեգիլդոսի մարտիրոսի. |
| ա | ժզ | |
| բ | ժէ | |
| գ | ժը | |
| դ | ժթ | |
| ե | ի | Ագնէսի կուսին. |
| զ | իա | |
| է | իբ | |
| ա | իգ | Գէորգայ մրտ. |
| բ | իդ | Ադալբէրթի եպս. և մրտ. |
| գ | իե | Մարկոսի Աւետարանչին. |
| դ | իզ | |
| ե | իէ | |
| զ | իը | Վիտալի մրտ. |
| է | իթ | Պետրոսի մարտիրոսի. |
| ա | լ | Կատարինէի Սիենացւոյ. |

ՄԱ

# Մ Ա Յ Ի Ս ·

| | | |
|---|---|---|
| բ | ա | Փիլիպպոսի և Յակոբայ Առաք. |
| գ | բ | |
| դ | գ | Գիւտ սրբոյ խաչին. |
| ե | դ | |
| զ | ե | Երանելւոյն Պիոսի Պապին. |
| է | զ | |
| ա | է | Փոյց Պաւղի Տն. |
| բ | ը | Երևումն Միքայէլ հրեշտ. |
| գ | թ | |
| դ | ժ | Անտոնինի Արհի եպս. խոստ. |
| ե | ժա | |
| զ | ժբ | Երինհայ Յովհանայ կուսին. |
| է | ժգ | |
| ա | ժդ | |
| բ | ժե | |
| գ | ժզ | |
| դ | ժէ | |
| ե | ժը | |
| զ | ժթ | |
| է | ի | Պեռնարտոսի հօրն խոստղի. |
| ա | իա | |
| բ | իբ | |
| գ | իգ | |
| դ | իդ | Անդրփոխումն սրբոյն Տօմինիկի. |
| ե | իե | Մարիամու Մագդաղենացւոյն. |
| զ | իզ | |
| է | իէ | |
| ա | իը | |
| բ | իթ | |
| գ | լ | |
| դ | լա | Յակոբայ մեր կրօնէն խոստ. |

# Յ Ո Ւ Ն Ի Ս.

| | | |
|---|---|---|
| ե | ա | |
| զ | բ | Փեթրոնեղայ կուսին. |
| է | գ | Մարկեղինեւ Պետրոսի մրտ. |
| ա | դ | |
| բ | ե | |
| գ | զ | Նորբերտոսի եպս, խոստվ. |
| դ | է | |
| ե | ը | Մեդարդոսի եպս, և խոստվ. |
| զ | թ | Փրիմոսի և Ֆելիկիանոսի մր. |
| է | ժ | |
| ա | ժա | Բառնաբայ Առաքելոյն. |
| բ | ժբ | Բասիլ. Կիրին. Նաբոր. Նազրի մր. |
| գ | ժգ | Անտոնի Պատուացւոյ խոստվ. |
| դ | ժդ | Բասիլիոսի եպսի, և խոստվ. |
| ե | ժե | Վիթի, և Մոդեստի, մրտ. |
| զ | ժզ | Մարցիանոս, եպս, և խոստ |
| է | ժէ | |
| ա | ժը | Օսանեայ կուսին. |
| բ | ժթ | Գերվասի և Պրոթասի մրտ. |
| գ | ի | |
| դ | իա | |
| ե | իբ | Տօն. Տ. Մարմնիքրիստոսի. |
| զ | իգ | Վեճիլիա. |
| է | իդ | Ծնունդ Յովհաննու մկրտչին. |
| ա | իե | |
| բ | իզ | Յովհաննու և Պօղոսի մրտ. |
| գ | իէ | |
| դ | իը | Վեճիլիա. |
| ե | իթ | Պետրոսի Պօղոսի Առաքելց. |
| զ | լ | Յիշատակ Պօղոսի Առաքելոյ. |

# ՅՈՒԼԻՍ·

| | | |
|---|---|---|
| է | ա | |
| ա | բ | Տեսութ Աստուածածնի առ Եղիս. |
| բ | գ | |
| գ | դ | |
| դ | ե | |
| ե | զ | |
| զ | է | |
| է | ը | |
| ա | թ | Յովհաննու մկրտ. |
| բ | ժ | Է. Եղբարց մկրտ. |
| գ | ժա | Փրոքոփիոսի Աբբայիսի. |
| դ | ժբ | Յոհաննու Հօրին խոստով. |
| ե | ժգ | |
| զ | ժդ | Պօնաւէնթուրայ եպս խոստ, |
| է | ժե | Հենրիկոսի կայսեր. |
| ա | ժզ | |
| բ | ժէ | Աղեքսիանոսի խոստով. |
| գ | ժը | |
| դ | ժթ | |
| ե | ի | Մարգարտի կուսին մկրտ. |
| զ | իա | Փրաքսեդեայ կուսին. |
| է | իբ | Մարիամու Մագդաղենացւոյն |
| ա | իգ | |
| բ | իդ | Վիճիլիա. |
| գ | իե | Յակոբայ Առաքելոյն. |
| դ | իզ | Աննայի մօր Աստուածածնին. |
| ե | իէ | |
| զ | իը | |
| է | իթ | Մարթայի կուսին. |
| ա | լ | |
| բ | լա | Իգնատիոսի խոստով. |

# ՕԳՈՍՏՈՍ.

| | | |
|---|---|---|
| գ | ա | Շղթայիցն Պետրոսի առաքելոյ. |
| դ | բ | Ստեփաննոսի պապին. |
| ե | գ | Վիճիլիա. |
| զ | դ | Տօմինիկոսի հօրն մերոյ. |
| է | ե | Սբ Աստուածածնին առ ձիւնն. |
| ա | զ | Այլակերպութիւն Տն. |
| բ | է | Գայետանոսի եւայլ. |
| գ | ը | |
| դ | թ | Վիճիլիա. |
| ե | ժ | Լօրենցիոսի մարտիրոսի. |
| զ | ժա | Տիբուրցիոսի մրտ. |
| է | ժբ | Կլարայ կուսին. |
| ա | ժգ | Հիպողիտոսի, եւ ընկերաց մրտ. |
| բ | ժդ | Վիճիլիա. |
| գ | ժե | Վերափոխումն Աստուածածնի. |
| դ | ժզ | Եակինթոսի խոստովանողի. |
| ե | ժէ | |
| զ | ժը | Ագապիտոսի մրտ. |
| է | ժթ | Բեռնարդոսի հօրն խոստ. |
| ա | ի | |
| բ | իա | |
| գ | իբ | Տիմոթէոսի եւ Սիմփորիոսի մրտ. |
| դ | իգ | Յակոբոս [illegible]. |
| ե | իդ | Բարթողոմէոսի Առաքելոյն. |
| զ | իե | Լուդովիկոսի թգւրի. |
| է | իզ | |
| ա | իէ | |
| բ | իը | Օգոստինոսի եպս խոստ. |
| գ | իթ | Գլխատումն Ս. Յհ. Մկրտ. |
| դ | լ | Վարդենեի կուսին. |
| ե | լա | Ռայմունդոսի ոչ ծնելոյ: |

## ՍԵՊՏԵՄԲԵՐ.

| | | |
|---|---|---|
| դ | ա | Էջխոխման Աւրրդին. |
| ե | բ | |
| ու | գ | |
| շ | դ | |
| կ | ե | Տարեկան յիշումն Ներսիսեանց. |
| բ | զ | |
| գ | է | Մարգարէի մեռն. |
| դ | ը | Ծնունդ կուսին Մարիամու. |
| ե | թ | Կորիոնի մեռն. |
| ու | ժ | Նիկողայոսի Թոլէնթինեան խառն. |
| շ | ժա | |
| կ | ժբ | |
| բ | ժգ | |
| գ | ժդ | Վերացումն սբ Խաչին. |
| դ | ժե | Յիշումն սրբոյն Տօմէնիկոսի. |
| ե | ժզ | Եւփիմեայ կուսին. |
| ու | ժէ | |
| շ | ժը | Քօռնէլիի և Կիպրիանոսի մեռն. |
| կ | ժթ | Յանուարիոսի մեռն. |
| բ | ի | Վիճակոս. |
| գ | իա | Մատթէոսի Առաքել Աւետարանչ. |
| դ | իբ | Մաւրիկի և ընկերաց մեռն. |
| ե | իգ | Թեկղի կուսին, և մեռն. |
| ու | իդ | Լատինէրէթ եղբ, և մեռն. |
| շ | իե | |
| կ | իզ | |
| բ | իէ | Կոզմայ և Դամիանոսի մեռն. |
| գ | իը | Վէնցէսլայի մեռն. |
| դ | իթ | Միքայէլ, հրեշտակապետին. |
| ե | լ | Հերոնիմ. և Գրիգորի լուսաւոր. |

ՀՄԴ.

# ՀՈԿՏԵՄԲԵՐ.

| | | |
|---|---|---|
| ա | ա | Տօն Ռօզարին. |
| բ | բ | Պահապան հրեշտակին. |
| գ | գ | |
| դ | դ | Ֆրանչիսկոսի խոստով. |
| ե | ե | Պլաչիտի և ընկերաց. մրտ. |
| զ | զ | Բրունոնի խոստով. |
| է | է | |
| ա | ը | Բիրձիթայ այրւոյն. |
| բ | թ | Դիոնէսիոսի և ընկերաց մարտ. |
| գ | ժ | Լուտովիկոսի Բերթրանտի. |
| դ | ժա | |
| ե | ժբ | Ռեմիճի եպս, և խոստ. |
| զ | ժգ | Գրիգորի լուսաւորչին. |
| է | ժդ | |
| ա | ժե | Թերեզիայ կուսին. |
| բ | ժզ | Մաղլոսի վանահ. խոստով. |
| գ | ժէ | |
| դ | ժը | Ղուկաս Աւետարանիչ. |
| ե | ժթ | Պետրոսի եպ̄ի խոստով. |
| զ | ի | |
| է | իա | |
| ա | իբ | Հիլարիոնի Աբբային. |
| բ | իգ | |
| գ | իդ | |
| դ | իե | Քրիսանթին և Քրիսանթիէն մր. |
| ե | իզ | |
| զ | իէ | Վիճիլա. |
| է | իը | Սիմոնի և Յուդայի Առաք. |
| ա | իթ | |
| բ | լ | |
| գ | լա | Գուինթինի մարտիրոս. |

# ՆՈՎԵՄԲԵՐ.

| | | |
|---|---|---|
| դ | ա | Տօն ամենայն Սրբոց. |
| ե | բ | Յիշատակ ամ. Ննջեցելոց. |
| զ | գ | |
| է | դ | Քարոլոսի եպս. և խոստով. |
| ա | ե | |
| բ | զ | |
| գ | է | |
| դ | ը | |
| ե | թ | Տօն ամ. սրբ. կարգիս մերոյ. |
| զ | ժ | Դ. Պսակելոց մարտ. |
| է | ժա | Մարթինոսի եպս. խոստով. |
| ա | ժբ | |
| բ | ժգ | Դիեգի եպս. և խոստով. |
| գ | ժդ | |
| դ | ժե | Ալբերթոսի խոստով. |
| ե | ժզ | |
| զ | ժէ | Գրիգորի սքանչելագործի. |
| է | ժը | Նաւակատեաց եկեղեցեաց. |
| ա | ժթ | Եղիսաբեթ այրւոյն. |
| բ | ի | Թէոդորոսի մարտ. |
| գ | իա | Ընծայումն կուսին Մարիամ. |
| դ | իբ | Ջեչիլիէյ կուսին, և մրտ. |
| ե | իգ | Քլեմենթի պապի. և մրտ. |
| զ | իդ | Քրիսողոնի մրտ. |
| է | իե | Կատարինէ կուսին. |
| ա | իզ | |
| բ | իէ | Մարգարէին ու Սամուէլի. |
| գ | իը | |
| դ | իթ | Սաթուռնինի եպս., և մարտ. |
| ե | լ | Անդրէի Առաքելոյն. |

Դ. Ե. Կ.

# ԴԵԿՏԵՄԲԵՐ.

| | | |
|---|---|---|
| զ | ա | |
| է | բ | |
| ա | գ | Քրիստափորայ Սամուէլի. |
| բ | դ | Վարվառեայ կուսին. |
| գ | ե | |
| դ | զ | Նիկողայոսի եպս. |
| ե | է | Ամբրոսիոսի եպս և խոստով. |
| զ | ը | Յղութիւն կուսին Մարիամու. |
| է | թ | |
| ա | ժ | |
| բ | ժա | |
| գ | ժբ | |
| դ | ժգ | Լուսիայ կուսին և մրտ. |
| ե | ժդ | |
| զ | ժե | |
| է | ժզ | Տամազի փափի և խոստով. |
| ա | ժէ | |
| բ | ժը | |
| գ | ժթ | |
| դ | ի | Վիճիլիա. |
| ե | իա | Թովմայի Առաքելոյն. |
| զ | իբ | |
| է | իգ | |
| ա | իդ | Վիճիլիա. |
| բ | իե | Ծնունդ Տն մերոյ Յի. Քի. |
| գ | իզ | Ստեփաննոսի Նախավկի. |
| դ | իէ | Յովհաննու Առք. Աւետր. |
| ե | իը | Անմեղ մանկանց մրտրց. |
| զ | իթ | |
| է | լ | Թովմայի եպս և խոստով. |
| ա | լա | Սեղբեստրոսի փափին. |

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

Քրիստոնէական ։

---

## Հանգանակ Առաքելոց ․

Հաւատամ՝ յԱստուած Հայրն ամենակարողն՝ արարիչն երկնի և երկրի ։ Եւ ի Յս Քս որդի նորա միածին Տէրն մեր ։ որ յղացաւ ի Հոգւոյն սրբոյ , ծնաւ ի Մարիամայ կուսէն ։ չարչարեցաւ ընդ Պոնտացւով Պիղատոսիւ , խաչեցաւ , մեռաւ , և թաղեցաւ ։ Էջ ի դժոխս ։ յերրորդում՝ աւուր յարեաւ ի մեռելոց ։ Համբարձաւ յերկինս , նստի ընդ աջմէ Այ Հօր ամենակարողի ։ Անտի գալոց է՝ դատել զկենդանիս և զմեռեալս ։ Հաւատամ՝ ի Հոգին սբ ։ Զսուրբ կաթուղիկէ եկեղեցին ։ Զհաղորդութիւն սրբոց ։ Զթողութիւն մեղաց ։ Զյարութիւն մարմնոյ ։ Զկեանսն յաւիտենականս ։

Ամէն ։

## Աղօթք Տէրունական ։

Հայր մեր՝ որ 'յ երկինս ես, սր̃ եղիցի անուն քո ։ Եկեսցէ արքայութիւն քո ։ Եղիցի կամք քո որպէս 'յ երկինս և 'յ երկրի ։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր ։ Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս, և մեք թողումք մերոց պարտապանաց ։ Եւ մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն ։ Այլ փրկեա զմեզ 'ի չարէ ։ Ամէն ։

## Ողջոյն Հրեշտակական .

Ողջոյն քեզ Մարիամ, լի̃ շնորհօք, Տէր ընդ քեզ ։ Օրհնեալ ես դու 'ի կանայս, և օրհնեալ է՛ պտուղ որովայնի քո Յիսուս ։ Սրբուհի Մարիամ մայր ԱԾ̃, աղօթեա՛ վս̃ մեր մեղաւորացս այժմ, և 'ի ժամու մահուան մերոյ ։ Ամէն ։

Տասն

## Տասն Պատուիրանքն Ա͞Յ։

Ես եմ Տ͞ր Ա͞Ծ քո, որ հանի զքեզ յերկրէն Եգիպտացւոց՝ ի տանէ ծառայութե͞.

1. Մի՛ անիցես զայլս Ա͞Ծս առաջի իմ։
2. Մի՛ առնուր զանուն Տ͞Ն Ա͞Յ քո ընդ ունայն.
3. Յիշեա՛ զի զօր շաբաթու ս͞բ արասցես։
4. Պատուեա՛ զհայր քո, և զմայր քո։
5. Մի՛ սպանաներ։
6. Մի՛ շնար։
7. Մի՛ գողանար։
8. Մի՛ խօսիցիս ընդ դէմ մերձաւորին քո զսուտ վկայութի͞։
9. Մի՛ ցանկար տան մերձաւորի քոյ։
10. Մի՛ ցանկասցիս կնոջ նորա, ոչ ծառայի, ոչ աղախնոյն, ոչ եզին, ոչ իշոյն, ոչ ամենայն իրաց, որք նորա են։

Եօթն խորհուրդք կաթուղիկէ Եկեղեցւոյ.

Մկրտութիւն, Դրոշմ, Հաղորդութիւն, Ապաշխարութիւն, Վերջին Օծումն, Կարգ, և Ամուսնութիւն։

Զօրութիւնք Աստուածականք։
Հաւատ, Յոյս, Սէր։

Զօրութիւնք Քարտինալականք։

Խոհեմութիւն, Բարեխառնութիւն, Արդարութիւն, և Արիութիւն.

Պարգևք Հոգւոյն Սրբոյ։

Իմաստութիւն, Իմացումն, Խորհուրդ, Արիութիւն, Գիտութիւն, Բարեպաշտութիւն, և Երկիւղ Տեառն։

ԺԲ. Պտուղք Հոգւոյն Սրբոյ.

Սէր, Խնդութիւն, Խաղաղութիւն, Համբերութիւն, Քաղցրութիւն, Բարութիւն, Երկայնամտութիւն, Հեզութիւն, Հաւատ, Պարկեշտութիւն, Ժուժկալութիւն, Ողջախոհութիւն։

Պա-

Է. Պատուիրանք Սիրոյ։

Սիրեսցես զՏէր Ած քո՝ յամենայն սրտէ քումմէ, և յամենայն յանձնէ քումմէ, և յամենայն մտաց քոց։ Սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո։

Ը. Պատուիրանք Եկեղեցւոյ։

Զկարգադրեալս յԵկեղեցւոյ զաւուրս տօնից, ՚ի գործոց ծառայականաց ՚ի բացկալով հռչակել։

Զպարտադիր պաշտօն Պատարագին ՚ի յաւուրս տօնից պատուասիրութեամբ լսել։

Զքառասներորդ պահսն, զորս եղանակին, և զհրաժարումն բառս առժողովութե Եկեղեցւոյ պահս պահել։ ՚Իուրբաթ, և ՚ի չորեքշաբթ զմիս ոչ ուտել։

Զմեղս փորձեցելոց քահանայի խոստովանել, և զամենասուրբ Հաղորդութիւն ՚ի զատկական ժամանակին առնուլ, և զպարտիսն զանձս մատուցանել ՚ի տաճարին։

Յաւուրս արգիլեցեալս յԵկեղեցւոյ զհարսանիս ոչ հռչակել։

Բարի

Է. Բարի գործք Հոգեւոր.

Ուսուցանել զանգէտն : Ուղղել զմեղաւորսն : Խրատել զերկբայեալն : Մխիթարել զվշտացեալն : Կրել համբերութեամբ զզրկանս : Թողուլ յանցաւորաց : Աղօթել վ͞ս կենդանեաց և մեռելոց, և վ͞ս հալածողաց :

Է. Բարի գործք Մարմնաւոր :

Կերակրել զքաղցեալսն : Արբուցանել զծարաւեալսն . Ընդունել զհիւրսն : Հանդերձել զմերկսն : Դիտել ՚ի տես հիւանդի, և բանտարգելոյ : Ազատել զգերիսն : Թաղել զմեռեալսն :

Ութն Երանութիւնք :

Երանի աղքատաց հոգւով' զի նոցա է Արքայութիւն երկնից :
Երանի հեզոց' զի նոքա ժառանգեսցեն զերկիր :
Երանի սգաւորաց' զի նոքա մխիթարեսցին :
Երանի որոց քաղցեալ է և ծարաւի են արդարութե՛ն' զի նոքա յագեսցին :

Երանի

Երանի ողորմածաց՝ զի նոքա ողորմութիւն գտցեն։
Երանի այնոցիկ, որք սուրբ են սրտիւք՝ զի նոքա զԱՅ տեսցեն։
Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք ԱՅ կոչեսցին։
Երանի որք հալածեալք իցեն վն արդարութեան՝ զի նոցա է արքայութիւն երկնից։

Հինգ ըզգայութիւն մարմնոյ.

Տեսանելիք, Լսելիք, Հոտոտելիք, Ճաշակելիք, և Շօշափելիք։

Եօթն մեղք գլխաւորք որք հասարակօրէն մահացուք անուանին։

Հպարտութիւն, Ագահութիւն, Բղջախոհութիւն։ Նախանձ։ Որկորամոլութիւն, Բարկութիւն, և Ծուլութիւն։

Չորս յետինք մտածելիք։

Մահ, Դատաստան մերձին, Դժոխս, և Արքայութիւն երկնից։


GLORIA IN EXCELSIS

ԻՆՉԵՐՈՐԴ

# ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Սրբոյն Ներսէսի, որ ասի ա-ռաւօտուն 'ի մէջ գիշերի, կամ առաւօտուն։ Նախ ասի զամ Հայր մեր։ Հաւատամ։ և ա-պա 'ի ձայն սրբանի այսպէս։

## ԻԵՐԹՈՂ

ՈՂՋՈՅՆ ՔԵԶ Մարիամ լի շնորհօք Տէր ընդ քեզ։ Օրհնեցեալ ես դու 'ի կանայս, և օրհնե-ցեալ է պտուղ որովայնի քո Յս Քրի-ստ։ Տր եթէ ողորմութեամբ խնամոց. Աստուածածին երկնաւորին զօրհնու-թիւնս քո։

։ Յաւերժութիւն Աստուածայնին ․

զի ԱԾ յօգնել ինձ նայեաց ։ որ եւ Տր յօգնել ինձ փութաս ։ փառք Հօր, եւ Որդւոյ, եւ Հոգւոյն Սրբոյ։ Որպէս էր ի սկզբանէ, եւ այժմ եւ միշտ, եւ ի յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։ Ալէլուիա ։ Խնդ ի Եօթանասներորդէն մինչեւ ի Փառքն ասի , Գովութիւն քեզ Տր , Թագաւոր յաւիտենական փառաց ։

Հրաւիրակ ․

Կատարածին աղօթքին ։ Եկայք երկիր պագցուք ։ Սաղմոս 94․

Եկայք ցնծասցուք ի Տէր , աղաղակեսցուք առ ԱԾ փրկիչ մեր ։ Կանխեսցուք առաջի նորա , խոստովանութեամբ , Սաղմոսիւք աղաղակեսցուք առ նա ։

Կատարածին աղօթքին եկայք ։

ԱԾ մեծ է, Տր թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի ․

Ի ձեռս նորա են ամենայն անդունդք երկրի , եւ բարձրութիւնք լերանց նորա են ։

Եկայք երկիր ։

Նորա է ծով՝ եւ նա արար զնա , եւ զցամաքս ձեռք նորա ստեղծին ․ Եկայք՝ երկրպագեսցուք նմա , անկցուք՝ եւ լացցուք առաջի Տն արարչին մերոյ ։

Նորին

Նախանձի է ՏՐ ԱԾ մեր, մեք ժո-
ղովուրդք ՚ի ձեռին նորա, և խաշն
արօտի նորա :
Կատարածին սրբոյին :
Այսօր եթէ ձայնի նորա լուիջիք
մի խստացուցանէք զսիրտս ձեր
ոպ ՚ի դառնութեն :
Յաւուրն փորձութեան յանապատի,
ուր փորձեցին զիս հարքն ձեր,
քննեցին զիս, և տեսին զգործս իմ
քառասուն ամ :
Եկայք երկիր .
Զանգիտեցի ընդ ազգին ընդ այնմիկ,
և ասացի, միշտ մոլորեալք են սր-
տիւք, և նոքա ոչ ծանեան զճա-
նապարհս իմ :
Որպէս երդուայ ՚ի բարկութեան
իմում, թէ մտցեն ՚ի հանգիստ իմ :
Կատարածին սրբոյին :
Փառք Հօր, և Որդւոյ և Հոգւոյն
Սրբոյ : Որ էր ՚ի սկզբանէ և այժմ
և միշտ : Եկայք երկիր :
Կատարածին սրբոյին : Եկայք :

Երգ .

Օր մեզ պայծառն ծագ և եր-
կին, երկիր պագէ երկնի-
նին, զնմանակերպեն երից ազգին,
տարած ճիղեան ընծայութին :
Որում արեգակն յառեալք և լու-
սին, բոլոր լուսեղծանեալք հրա-

զանոնին , հեղանալ զորութեան եր_
կրայնին , պարգևեալ ի ծոց կու_
սին :

Ի ձեռներ են Տեառն երանելի , ճշմարտութեամբ զօրաց երկնից , եւ պարգևացն հանդերձի , հանդերձ ի բում ատենս :

Ամենայն երկնից պատուելոյ , եւ օրհնեալ սրբով յաղագս , զորս ձեռնադիր ողորմ ծնեալ , զանուն Այս անեւր մարդոյ :

Այսպէս տարածեալ են առ մարդիկ աղէկաց զորութեան անտառելի , պարգևեալ ի թշնամիս մեզ աւետարանի եւ ի ժամ մահու ընդ մեզ ողոր_ մութի :

Փառք քեզ ծնելոյդ ի սրբոյ կուսէն , որ ես զմեկեալդ յամենայն_ անուն , ընդ Հօր եւ սրբոյ Հոգւոյն մի_ աւորեալ , ի անսկզբնական միջոց յաւ_ իտենս : Ամէն :

Սաղմոս Ա

Տէր Տէր մեր՝ որ սքանչելի է ա_
նուն քո , ի վեր քան երկինս :
Համբարձաւ մեծ վայելչութիւն քո
ի վերայ քան զերկինս , ի բերանոց
մանկանց տղայոց ստնդիացաց հաս_
տատեցեր զօրհնութիւն :
Վասն թշնամեաց քոց Տէր , զի
եղծցէ

եղերցի թշնամին, և հակառակորդն.
Տեսից զերկինս, զգործս մատանց
քոց, զլուսին և զաստեղս՝ զոր
դու հաստատեցեր։
Ո՞վ է մարդ՝ զի յիշես դու զնա,
կամ՝ որդի մարդոյ, թէ այց ինչ
առնիցես դու նմա։
Փոքր ինչ խոնարհ արարեր զնա
քան զհրեշտակս քո, փառօք և
պատուով պսակեցեր զնա, և կա-
ցուցեր զնա ի վերայ ամենայն ձե-
ռագործաց քոց։
Զամենայն ինչ հնազանդ արարեր
ի ներքոյ ոտից նորա, զխաշինս և
զարջառս՝ և զամենայն ինչ։
Եւս և զթռչունս երկնից՝ զգազանս եր-
կրի, և զձկունս ծովու, որք
շրջին ընդ շաւիղս ծովու։
Տէր Տէր մեր՝ զի սքանչելի է անուն
քո, յամենայն երկրի։
Փառք Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն
սրբոյ.

Սաղմոս ԺԸ.

Երկինք պատմեն զփառս ԱՅ.
և զարարածս ձեռաց նորա
պատմէ հաստատութիւն։
Օր աւուր բղխէ զբան, և գիշեր
գիշերի ցուցանէ զգիտութիւն։
Ոչ են բարբառք՝ և ոչ են խօսք՝ որոց
ոչ լսին ձայնք նոցա։
Ընդ ամենայն երկիր ել բարբառ

նոցա , և մինչև 'ի ծագս աշխարհի ելին խօսք նոցա ։

Յարեւու եհար զխորան իւր , և ինքն որպէս փեսայ՝ զի ելանէ յառագաստէ իւրմէ , ցնծայ նա որպէս հսկայ յընթանալ զճանապարհս իւր ։

'Ի ծագաց երկնից են ելք նորա , և հանգիստ նորա մինչև 'ի ծագս նորուն , և ոչ ոք իցէ , որ թաքիցէ 'ի տապոյ նորա ։

Օրէնք Տն անբիծք են՝ և դարձուցանեն զհոգիս , վկայութիւն Տն հաւատարիմ է , և իմաստուն առնէ զտղայս ։

Արդարութիւնք Տն ուղիղք են և ուրախ առնեն զսիրտս , պատուիրանք Տն լոյսք են՝ և լոյս տան աչաց , երկիւղ Տն սուրբ է և մնայ յաւիտեան ։

Դատաստան Տն ճշմարիտ է , և արդար է 'ի նոյն ։

Ցանկալի է նա քան զոսկի , և քան զականս պատուականս բազումս , քաղցր է նա քան զմեղր խորիսխ ։

Քանզի՝ ծառայ քո պահեսցէ զնոյն . 'ի պահել նմա հատուցումն բազում ։

Զյանցուածս իւր ով կարէ առնուլ 'ի միտ 'ի գաղտնեաց իմոց սուրբ արա զիս

զի Տէր, և յօտարէն պահեա զծառայս քո:

Ապա թէ ոչ տիրեսցեն ինձ, յայնժամ անբիծ եղէց՝ և սուրբ եղէց ի մեղաց մեծաց:

Եղիցին բանք հաճոյք բանից բերանոյ իմոյ, և խորհուրդ սրտի իմոյ առաջի քո յամենայն ժամ, Տէր օգնական իմ, և փրկիչ իմ:

Փառք Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ.

Սաղմոս 23.

Տեառն երկիր լրիւ իւրով աշխարհ, և ամենայն բնակիչք նորա:

Նա ի վերայ ծովուց հիմնեաց զնա, ի վերայ գետոց պատրաստեաց զնա:

Ո՞վ ելցէ ի լեառն Տեառն, կամ ով կացցէ ի տեղւոջ սրբութեան նորա:

Որ սուրբ է ձեռօք՝ և անբիծ սրտիւ, որ ոչ էառ ընդունայնութեան զանձն իւր, և ոչ երդուաւ նենգութեամբ ընկերի իւրում:

Սա առցէ զօրհնութիւն ի Տեառնէ, ողորմութիւն յԱՅ փրկչէ իւրմէ:

Այս ազգ է որ խնդրէ զՏր, խնդրէ զերեսս ԱՅ Յակոբայ:

Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր, համբարձցին դրունք յաւիտենից՝ և մտցէ Թագաւոր փառաց

Ո՞վ է սա թագաւոր փառաց՝ Տէր հզօր զօրութեամբ իւրով, Տէր հզօր ի պատերազմի ։

Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր, համբարձցին դրունք յաւիտենից՝ և մտցէ թագաւոր փառաց ։

Ո՞վ է սա թագաւոր փառաց, Տէր զօրութեանց, սա ինքն է թագաւոր փառաց ։

Փառք Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն Սրբոյ ։

Օրհնեցեալդ ես դու ի կանայս և օրհնեցեալ է պտուղ որովայնի քո, Յս Քս ։

ի Աւետեացն ձայնէր ի շնորհաց ։ քոյ ։

ի. Վասն սրբոյն օրհնեալ զքեզ Ած յաւիտեան ։ Հայր մեր ։

Եւ մի տանիր ։ Այլ փրկեա զմեզ ։ Հրամայեա Տր օրհնել ։ օրհնութիւն ։

Սրբուհի կոյս կատարեալ բարեխօսեսցէ առ Տր վասն մեր ։ Ամն ։

Ընթերցուած ։

Սրբուհի Մարիամ կոյս կուսանաց Մայր և դուստր արքային արքայից ամենեցուն պարգեւեա մեզ զփրկութիւն քո, զի արժանացուք ընկալնուլ արքայութեան երկնից, և ընդ ընտրեալսն Այ թագաւո-

րեսց-

բնութեամբ յանխափան : Արդ դու Տէր ողորմեա մեզ :

Առաւօտուց գոհութիւն :

Ողջ. Սրբուհի և անարատ կոյս որով գովութեամբ , բարեբանեմք զքեզ : Քանզի դու երկինք ու կարէին տանել բարձեր զնա ի գիրկս քո : Փ. Օրհնեցեալն դու ի կանայս և օրհնեալ է պտուղ որովայնի քո Յս Քս : Քանզի դու : Հրեշտակաց : Սրբուհի Աստուածածին, կուսին մեզ օգնական : Ամէն :

Ընթերցուած .

Սրբուհի Մարիամ՝ քանդրթած գթածուդ , բարեխօսեա վասն մեր սրբուհիդ սրբոց . զի քո կայ ընկալցուք զաղաչանս մեր , որ զՔս մեր ծնար ի բերն Թագաւորութեան երկնից , զի ընծայեսցէ մեզ մեր անձանց փրկութիւն : Արդ դու Տէր .

Ող. Խորանաբնակեալն Մարիամ որ տաճար զՏէրն և զատեղծողն ամփոփեցեր : Ծնար զնա որ արար զերկինս և զմեզ յանխափան :

Փ. Ողջոյն Մարիամ՝ լի՛ շնորհօք Տէր ընդ քեզ : Ծնար զնա որ արար : Հրաշալեաց : Օրհնութեամբ գովեմ որբուհի կոյս Մարիամ՝ ծնողդ զԹած զանմահին ի բերան : Ամէն :

ԽԵ Ժամերգութիւն Աստուծոյ.

Ընթերցուած ։

Սրբուհի Աստուածին որ խնամակալէդ
արժանաւորեցար յղանալ ծնանել
զոր անեղային տիեզերքն ոչ կա-
րէին պարունակել. քանզի նա բարե-
խօսութեբ Ջերմեռանդ զմեզ մեր, որ
քեզ փրկեալքս արժանացաք եր-
նել ՚ի աթոռն յանխախտական փառաւո-
րոյ թագաւորեսցուք անվախճանն
վայելչին որդւոյ քո ։

Արդ դու Տր ողորմեա ։

որ Բարեբանեալ անեղութեամբ
սրբուհի կոյս Մարիամ, և անեղային
զուարթութեամբ արժանաւորեցոյն ։

Ձի՝ իբրեւ ծագեցաւ արեգակն ար-
դարութեան, Քն Աստուած մեր ։
որ Աղօթեամ քին ժողովրդեան ող-
ջութի ժամանեսցէ զք եկեղեցական-
նաց, Բարեխօսեամ զն Ջերմեռանդ-
կանաց, որ ծանեաւն անեղերեսն
զօրութեամբ քո, որք կատարեն
զկամս քո ։ Ձի ՚իբրեւ ծագե-
ցաւ ։ Փառք Հօր ։ Քն Աստ մեր ։

Դատաւորութեան աղօթեալ ընդ Աստ-
ուծոյ և Աստուածածնի Ե-
կեղեցւոյ, և Վարդապետաց
եկեղեցւոյ ։

Օրհնեալ Աստ մերոյ, որ Տէր
խոստովանիմք ։

Ձէն

Զքեզ յաւիտենականդ Հայր, ա-
մենայն երկիր պաշտէ։
Քեզ ամենայն հրեշտակք քեզ եր-
կինք, և ամենայն իշխանութիւնք։
Քեզ քերովբէք և սերովբէք, ան-
դադար ձայնիւ աղաղակեն։
Սուրբ. Սուրբ. Սուրբ. Տէր Աստուած
Սաբաւովթ.
Լի են երկինք և երկիր մեծութեամբ
փառաց քոց։
Զքեզ փառաւորեալ դասք առա-
քելոց։
Զքեզ մարգարէից գովելի թիւք։
Զքեզ մարտիրոսաց սպիտակազգեաց
գունդն գովէ։
Զքեզ ընդ ամենայն տիեզերս խոս-
տովանի սուրբ եկեղեցի։
Զհայրդ անչափ հանդիսամեծու-
թեան։
Զպատուականդ քո ճշմարիտ և միածին
որդին։
Նոյն և զմխիթարիչ սուրբ Հոգին։
Դու թագաւոր փառաց Քս։
Դու հօրն մշտնջենաւոր ես որդի։
Դու առնելով զմարդն առ 'ի փր-
կել զմարդ, ոչ գարշեցար 'ի յորո-
վայնէ կուսին։
Դու յաղթելով մահու խայթոց,
բացեր հաւատացելոց զարքայութիւն
երկնից։

Դու նաւս ընդունելի Աստուծոյ հօր 'ի փառս :

Համատարածն դրեալ ըն զորովայն քո դա-րանոյ :

Ուստի որով աղաչեմք զքեզ օգնու-թեան ժամանակս ծառայից քոց, զորս պատուականս արարեալ ընկեցեր :

Արա ընդ մեզ քո 'ի յաւիտենականն փառս համարել :

Փրկեա՛ զժողովուրդս քո Տէր, և օրհնեա՛ զժառանգութիւն քո :

Եւ հովուեա՛ զնոսա և բարձրացո՛ զնոսա մինչև յաւիտեան :

Զօր հանապազ օրհնեսցուք զքեզ :

Եւ գովեսցուք զանուն քո 'ի յաւի-տեան, և 'ի յաւիտեանս յաւիտե-նից :

Հաճեաց Տէր 'ի յօրս յայս, առանց մեղաց պահել զմեզ :

Ողորմեաց մեզ Տէր ողորմեաց մեզ :

Եղիցի ողորմութիւն քո Տէր 'ի վերայ մեր՝ որպէս յուսացաք 'ի քեզ :

Ի քեզ Տէր յուսացայ, մի՛ ամաչե-ցից 'ի յաւիտեան :

սր. Բարեխօսեա՛ վն մեր սրբուհի Ածածին :

ու. Զի արժանի լիցուք խոստմանցն Քի.

Ի դառնութեան Սաղմոս ասասցեն յետ կանոնական ժամուն .

Ա՜ծ ՚յ օգնել ինձ նայեա՛ց : Եւ Տէր ՚յ ընկերել ինձ փութա՛ : Փառք Հօր , և Որդւոյ : Որ էր ՚ի սկզբանէ : Ալէլուիա .

Սաղմոս 92.

Տէր թագաւորեաց՝ զվայելչութիւն զգեցաւ , զգեցաւ Տէր զզօրութիւն ընդ մէջ իւր էած : Հաստատեաց զաշխարհ՝ որ մի՛ սասանեսցի , պատրաստ է աթոռ քո ՚ի սկզբանէ յաւիտենից դու ես : Ամբարձան գետք Տէր , և ամբարձին գետք զձայնս իւրեանց , յամբարձցեն գետք ՚ի գնացս իւրեանց : ՚Ի ձայնէ ջուրց բազմաց , սքանչելի եղեն զբօսանք ծովու : Սքանչելի եւս գոլ Տէր ՚ի բարձունս, վկայութիւնք քո մեզ յոյժ հաւատարիմ : Տան քում վայելէ սրբութիւն՝ Տէր ընդ երկայնաւուրս : Փառք Հօր , և Որդւոյ , և Հոգւոյն սրբոյ :

Սաղմոս 99.

Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր , ծառայեցէք Տեառն ուրախութեամբ : Մտէք առաջի նորա ցնծութեամբ , ծա-

Ծառայք՝ զի նա է Տր Ած մեր:

Նա արար զմեզ՝ և ոչ մեք եմք, մեք ժողովուրդք՝ և խաշն արօտի նորա:

Մտէք ընդ դրունս նորա խոստովանութեամբ, և օրհնութեամբ ի գաւիթս նորա:

Խոստովան եղերուք Տն, և օրհնեցէք զանուն նորա:

Քաղցր է Տր յաւիտեան է ողորմութիւն նորա, յազգէ մինչև յազգ է ճշմարտութիւն նորա:

Փառք Հօր, և Որդւոյ, և Ոգւոյն սրբոյ.

Սաղմոս 62.

Ա՜ծ Ա՜ծ իմ, ես առ քեզ առաւօտ առնեմ, ծարաւեցաւ առ քեզ հոգի իմ, քանիցս պատիկ և և մարմին իմ:

Ընդ երկիր անապատ և անջրդի, ուր ոչ գոյ ի նմա ճանապարհ:

Այսպէս ի սրբս երևեցայց քեզ, տեսանել ինձ զօրութիւնս քո և զփառս քո:

Վասն զի լաւ է ինձ ողորմութիւնք քո, քան զկեանս իմ, և շրթունք իմ, գովեսցեն զքեզ:

Այսպէս օրհնեցից զքեզ ի կեանս իմ, և յանուն քո համբարձից զձեռս իմ:

Իբ ի ճարպոյ պարարտութենէ լցցի անձն

անձին իմ՝ շրթամբք ցնծութեան օրհ-
նեսցէ զքեզ բերան իմ։
Զի թէ յիշէի զքեզ յանկողնի ի-
մում, ընդ առաւօտս կանխեալ
խօսէի ընդ քեզ։
Զի եղեր իմ օգնական, ՚ի հովանի-
թեւոց քոց ցնծացայց։
Եկն զկնի քո անձն իմ. եւ զիս
ընկալաւ աջ քո, եւ նոքա ՚ի նանիր
խնդրեցին զանձն իմ։
Մտցեն ՚ի ներքին անդնդոց եր-
կրի, մատնեսցին ՚ի ձեռս սրոյ,
եւ բաժինք աղուեսուց եղիցին։
Թագաւոր յուսասցի ՚ի Տէր,
գովեսցին ամենեքեան, որք երդ-
նուն նովաւ, խցցին բերանք ա-
նօրինաց՝ որք խօսին զանիրաւութիւն։
Աստ ոչ ասի Փառք.

Սաղմոս ԿԶ.

ԱԾ ողորմեաց մեզ, եւ օրհնեա
զմեզ, երեւեցո զերեսս քո
՚ի մեզ եւ ողորմեաց մեզ։
Ճանաչել յերկրի զճանապարհս
քո, յազգս ամենայն զփրկութիւն
քո։
Խոստովան եղիցին առ քեզ ժողո-
վուրդք ԱԾ, խոստովան եղիցին
առ քեզ ժողովուրդք ամենայն։
Ուրախ եղիցին եւ ցնծասցեն ա-
զինք, զի դու դատես զժողովուրդս

յու-

ուղղութե, և ազգաց երկրի ա-ռաջնորդես ։

Խոստովանեսցին քեզ ժողո-վուրդք Ած, խոստովանեսցին քեզ ժողովուրդք ամենայն ։

Երկիր ետ զպտուղ իւր, և օրհ-նեսցէ զմեզ Ած՛ Ած մեր ։

Ած մեր օրհնեսցէ զմեզ, և ՚ի նմանէ երկիցեն ամենայն ծագք երկրի ։

Փառք Հօր, և Որդւոյ.

Երգ երից մանկանց. Դանիէլ Գ.

Օրհնեցէք ամենայն գործք Տն զՏէր, օրհնեցէք և բարձրա-րարէք զնա յաւիտեանս ։

Օրհնեցէք երկինք զՏէր, օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեանս ։

Օրհնեցէք հրեշտակք Տն, և ջուրք որ ՚ի վերոյ երկնից զՏէր ։

Օրհնեցէք զօրութիւնք Տն՛ արե-գակն, և լուսին զՏէր, օրհնեցէք ։

Օրհնեցէք աստեղք երկնից՛ ան-ձրեւ և ցօղք զՏէր, օրհնեցէք ։

Օրհնեցէք ամենայն հողմք՛ հուր և ջեր զՏէր, օրհնեցէք ։

Օրհնեցէք ցուրտ և տօթ՛ ցօղ և ձիւնաբեր զՏէր, օրհնեցէք ։

Օրհնեցէք սառն և սարդ՛ և եղեամն և ձիւն զՏէր, օրհնեցէք ։

Օրհնեցէք տիւք, և գիշերք, լոյս

և

և խոնաւք զՏր, օրհնեցէք :

Օրհնեցէք ամպք, և փայլատակունք՝ և երկիր, զՏր օրհնեցէք :

Օրհնեցէք լերինք և բլուրք՝ և ամենայն բոյսք երկրի զՏր, օրհնեցէք :

Օրհնեցէք աղբիւրք ծովք և գետք զՏր, օրհնեցէք :

Օրհնեցէք կէտք և ամենայն կայտառք՝ որ ՚ի ջուրս, և թռչունք երկնից զՏր, օրհնեցէք :

Օրհնեցէք գազանք՝ և անասունք, և որդիք մարդկան զՏր, օրհնեցէք :

Օրհնեսցէ Իսրայէլ զՏր, օրհնեսցէ և բարձր արասցէ զնա յաւիտեանս :

Օրհնեցէք քահանայք Տն զՏր, օրհնեցէք :

Օրհնեցէք ծառայք Տն զՏէր, օրհնեցէք :

Օրհնեցէք հոգիք և շունչք արդարոց զՏր, օրհնեցէք :

Օրհնեցէք սուրբք և խոնարհք սրտիւք զՏէր, օրհնեցէք :

Օրհնեցէք Անանիա, Ազարիա և Միսայէլ զՏէր, օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեանս :

Օրհնեսցուք զՀայր և զՈրդի ընդ սբյ Հոգւոյն գովեսցուք և առաւել

բար-

բարձր պատուեսցուք զնա յաւիտեանս։
Օրհնեալ ես ի վերայ հաստատութե երկնից, գովեալ և փառաւորեալ յաւիտեանս։
Աստ ոչ ասի փառք։

Սաղմոս 148.

Օրհնեցէք զՏր յերկնից, օրհնեցէք զնա ի բարձունս։
Օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա, օրհնեցէք զնա ամենայն զօրութիւնք նորա։
Օրհնեցէք զնա արեգակն և լուսին, օրհնեցէք ամենայն աստեղք, և լոյս։
Օրհնեցէք զնա երկինք երկնից, և ջուրք՝ որք ի վերոյ քան զերկինս օրհնեսցեն զանուն Տն։
Զի նա ասաց՝ և եղեն, հրամայեաց՝ և հաստատեցան։
Կացոյց զնոսա յաւիտեան յաւիտենից, հրաման ետ և ոչ անցցէ։
Օրհնեցէք զՏր յերկրէ վիշապք և ամենայն խորք։
Հուր և կարկուտ, ձիւն և սառն, հողմ մրրկի, որք առնեն զբանս նորա։
Լերինք և ամենայն բլուրք, ծառք պտղաբերք՝ և ամենայն մայրք։
Գազանք՝ և ամենայն անասունք,

սո-

սողունք եւ ամենայն թռչունք թեւ_
աւորք:
Թագաւորք երկրի՝ եւ զօրք իւ_
րեանց, իշխանք՝ եւ ամենայն դա_
տաւորք երկրի:
Երիտասարդք՝ եւ կուսանք՝ ծերք՝
եւ տղայք օրհնեսցեն զանուն Տն:
Բարձրացաւ անուն նորա միայն,
խոստովանութիւն նմա ՚յերկինս եւ
՚յերկրի:
Բարձր արասցէ Տր զեղջիւր ժողո_
վրդեան իւրոյ, օրհնութիւն ՚յա_
մենայն սրբոց նորա, ՚յորդւոցն Իս_
րայէլի, ժողովրդեան, որ մերձ է
առ Տր:
Աստ ո՛չ ասի Փառք:

Սաղմոս 149.

Օրհնեցէք զՏէր ՚յօրհնութիւն
նոր, օրհնութիւն նմա ՚յեկե_
ղեցիս սրբոց:
Ուրախասցի Իսրայէլ ՚յարարիչ
իւր՝ որդիք Սիոնի ցնծասցեն ՚ի
թագաւորին իւրեանց:
Օրհնեսցեն զանուն նորա օրհնու_
թբ, Սաղմոսիւք՝ եւ օրհնութեամբ
Սաղմոս ասասցեն նմա:
Զի հաճի Տր ընդ ժողովուրդս իւր,
բարձր արասցէ զհեզս ՚ի փրկու_
թե:
Պարծեսցին սուրբք փառօք եւ ցնծ_
ասցեն

ասցեն 'ի հանգիստս իւրեանց , և բարձր արասցեն զԱստուած բերանօք իւրեանց :

Սուսերք երկսայրիք են 'ի ձեռս նոցա , առնել վրէժխնդրութիւն 'ի հեթանոսս յանդիմանութիւն ամենայն ժողովրդոց :

Կապել զթագաւորս նոցա կապանօք , զփառաւորս նոցա ձեռնակապաւ երկաթեաւ :

Առնել 'ի նոսա դատաստանս գրեալ , փառք այս են յամենայն սրբոց նորա :

Աստ ոչ ասի փառք :

Սաղմոս 150.

Օրհնեցէք զՏՐ 'ի սրբութեան նորա , օրհնեցէք զնա 'ի հաստատութեան զօրութեան նորա :

Օրհնեցէք զնա 'ի զօրութեան նորա, օրհնեցէք զնա 'ի բազում մեծութեան նորա :

Օրհնեցէք զնա 'ի ձայն օրհնութեան, օրհնեցէք զնա Սաղմոսիւք և օրհնութեամբ :

Օրհնեցէք զնա ցնծութեամբ , պարեցէք զնա ուրախութեամբ :

Օրհնեցէք զնա 'ի բանս քաղցունս , օրհնեցէք զնա 'ի բարբառ ընկին :

Օրհնեցէք զնա 'ի ձայն գոհութեան

ամե-

ամենայն հոգիք օրհնեցէք զՏէր։
Փառք Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն
Սրբոյ. Անթիփոնա.
Յետ Տնանկերութեն լոյս անստուերական
մանկեր, աջին Աստուծոյն բարեխ-
խօսական վասն մեր ։ Գլուխ.

Ես ի բարձր զօրթ աղաղակեցին,
զանուշաձայնութի, և ձայնիւ խո-
սրբոյ սրբոյ և Համբառնութե ։
առ Աստուծոյ փառաւորութե ։ Երգ ։

Որ մարմնացար աստ այրունի,
բարձրացեալ երկինք ստորա-
նի, նախասահմանին քամ անեղանի,
կամին արարչացն անմամբ կոչի ։
Զօր Եւայ երարձ ստրկեցին,
դարձեալ չնորհեալ որդւով քո իմ,
այժմ տուրևութեան մարդիկ եր-
կինս, որ զայս երեր զաւան երկ-
նայինն ։
Դու արքային զաւան և խորան,
այնմ ատ լուսոյն Հօր ՃՃմարտն,
կուսին առաջ զինութեան անիմանալին,
փրկեալ նորս ծանր հայեր ձեռամբ ։
Մարդ սրբութե որ աճրուցի,
ազգին շնորհաց անապատ ելի,
պարտեաց կենդանին մեզ աչխարհի
ժամ մահուան ընկալ մեզ առաջ-
խաղի ։
Փառք քեզ Տէրոյդ Բարձրեալ
կուսին, որ ես զամէնայն անմա-
ւոյն.

նեանն, ընդ Հօր, և սբ Հոգւոյն միաւորականն, 'ի յանեղանելին մերոյ յաւիտեանս, Ամէն :

փ· Լուսաւորեալ գտա ԱԾ քան զամենեսեան լուսաւորեալ գտա :

զ· Եւ բնակեցոյց զնա 'ի խորանի իւրում :

## Օրհնութիւն Զաքարիայ Հօրն Յովհաննու . Ղուկ. Ա.

Օրհնեալ Տէր ԱԾ Իսրայէլի, որ այցել, և արար փրկութիւն ժողովրդեան իւրոյ :

Յարոյց մեզ եղջիւր փրկութեան 'ի տանէ Դաւթի ծառայի իւրոյ որ խօսեցաւ բերանով սրբոցն, որք յաւիտենից մարգարէքն էին :

Փրկութիւն 'ի թշնամեաց մերոց, և 'ի ձեռաց ամենայն ատելեաց մերոց :

Առնել ողորմութիւն ընդ հարս մեր, և յիշել զկտակարանս սրբութեան իւրոյ :

Զերդումն, զոր երդուաւ առ Աբրահամ հայր մերոյ տալ մեզ, առանց երկիւղի զփրկութիւն 'ի թշնամեաց մերոց :

Պաշտել զնա սրբութեամբ և արդարութեամբ առաջի նորա, զամենայն աւուրս կենաց մերոց :

Եւ դու մանուկ մարգարէ բար-

ձրե-

Բարձրելոյն կոչեսցիս, զի երթիցես առաջի Տն , պատրաստել զճանապարհս նորա :

Տալ գիտութիւն փրկութեն ժողովրդեան նորա , ՚ի թողութիւն մեղաց մերոց :

Վն գթոյ ողորմութեն Տն Այ մերոյ , որով այցելեսցէ մեզ արեւելքն ՚ի բարձանց , լուսաւորել զխաւարս մեր :

Ծագել զլոյս ՚ի մեղաց՝ այսոցիկ որք նստէին ՚ի խաւարի , և ՚ի ստուերս մահու , ուղղել զոտս մեր ՚ի ճանապարհս խաղաղութեն :

Անթիփոն .

Ով փառաւորեալ մայր սրբուհի կոյս Մարիամ Աստուածածին , որ միայն արժանի եղեր տանել զՏէրն , և զխոստովանեցեալ զԹագաւորն հրեշտակաց , հայցեմք ՚ի քէն զգթութիւն յիշեա զմեզ և առ Քն , բարեխօսեա վս մեր , զի հաստատեալ քոյին յաղօթամատութիւն զի արժանի լիցուք հասանել յ՚ արքայութիւն երկնից : Տէր լուր աղօթից իմոց :

Եւ աղաղակումն իմ առ քեզ եկեսցէ :

Աղօթք .

Շնորհեա մեզ ծառայից քոց Տէր Այ ամենակալ ՚ի ...., և

մշտն

մշտնջենաւոր առողջութիւն հոգւոյ և մարմնոյ, և փառաւորեալ բարեխօսութեամբ երանելոյ և միշտ կուսին Մարիամու Ա՛ծածնին, որդ՜ մերս փրկիլ ՚ի տրտմութենէ, և վայե՜ լել յաւիտենական խնդութեան : Ք՛իւ Տ՛Է մերով : Անթիփօնա .

Պետրոս առաքեալ և Պօղոս, վարդապետն հեթանոսաց, նո՜ քա մեզ ուսուցին զօրէնս քո Տ՛Է.

Փ. Պատմեսցեն զփառս Ա՛Յ.

Եւ զարարածս ձեռաց նորա ՚ի միտ առնին. Աղօթք :

Տ՛Է որ աջով քո զերանե՜ լին զՊետրոս առաքեալն ՚ի ջրոյն ՚ի մէջ ալեաց ծովուն, զի մի ընկղմեսցի յարուցեր և զա՜ ռաքելակից նորին զՊօղոս զերիցս նաւաբեկեալ ՚ի խորս ծովու փր՜ կեցեր, լուր մեզ բարեաց և շնորհեա երկոցունց բարեխօսութեամբ՚ն արժանացուք զփառս յաւիտենա՜ կանն ժառանգել : Ք՛իւ Տ՛Է մե՜ րով : Անթիփօնա .

Օրհնեալ փրկիչ ամենեցուն որ անօրինելով զփրկութիւն ազգի մարդկան եւ աշխարհի բոլո՜ րից զերանելին Յովհաննէս :

Փ. Օրէնք Ա՛Յ են ՚ի սիրտ իւրեանց.

Եւ մի գայթակղեսցին գնացք նո՜ րա :

Աղ՜

## Աղօթք .

Ո՛Վ Տէր , որ կամեցար լուսաւորել զե-կեղեցի քո , արժանաւորութեամբ [illegible] հօրն մերոյ խոստովանողին քո , աղօթիւք նո-րա սրբեալս մեզ , յորում յամէն-ամէն մնալով յաղթու-թեամբ և ի հաղորդութեան առանձնական մեզ առնուլ ։ Վասն ՏԷ մերոյ ։

## Ընթերցուած .

Ո՛Վ որ քան բարեբախտ փառս մեզ կայ սորա , որպէս արդ-ժանէն արժանաւորութիւնք քո-պարապոյ սորա բանին և գործոյ աշխարհս զորդարոյ , և ես նոյն սորալեօք մեր հաճոյահաճոյ ։ [illegible] ։ [illegible] ի [illegible] ։

Տ Նորհեան աղաւեմք ամենակալդ , ՏԷ զի [illegible] պատուանդան կեանս որոց քոյ երանելեացն , Պետրոսի , Դոմինիկոսի , Թովմայի , Վինչենտոսի , Հռայմոնդոսի , Անտոնինոսի , Յա-կինթոսի , Փիլիպոսի , Գոնզալուսի , Բարթողոմէոսի , Կատարինեայ , Վարդենեայ , Ագնեսի , և Մարգարի-տայ , որք մեծապէս զմեզ մխիթարեցին [illegible] կատա-

րենք, նա եւ արարածոց հրեշտա-
կաց Քրիստոսի․ Առաքինութիւն․

Ամենայն որդւոց Ադամայ բարեխօսեսցէ
առ Տէր վասն մեր, եւ ամենեցուն
փրկութեան։
աղօթէ։ Աղօթեսցէ առ Տէր վասն մեր
ամենայն որդւոց ԱԴ։ Նոյն․ Դիտա-
ւորութիւն լինելոյ խոստովանեալն Քրիստոսի։

Աղօթք․

Պաշտեմ ամբողջ սրտիւ զքեզ Տէր,
զի ամենայն որդւոց քոց հաստա-
տեաց բարեխօսութիւն վասն մեր, որ
եւ անձնահաճութեամբ քո հաճելոյ
միայն լինել նոյն։ Քրիստոս Տէր մերով։

Առաքինութիւն․

Տէր մեր Տէր զօրութեան
յանուէր մեր, զի ոչ որ է որ
մարմնոյ վասն մեր, բայց միայն
դու Տէր Աստուած մեր։
առաքել՝ Եղիցի խոնարհութիւն ի սր-
տութեան քում։
Ինչ Եւ աստուածութիւն ի աշխարհ-
րարս։

Աղօթք․

Տէր, յորժամ ամենայն որ բարձանք
եւ ողորմ խորհուրդ, եւ արդ արդ-
եանն գործք, որոց ծառայից եւ ա-
ղախնեաց քոց, զհաստատութիւն
նոյն, զոր աղօթեմ ոչ կարէ առ
որ սիրով մեր պատուիրանացն ի կա-
տարել պատուիրանաց քոց, եւ
բար-

բարձեալ ամ՛ խաւարութիւն թշնա-
մեացն, խաղաղութիւն կենաց մեր
բոյն որ պարգեւատուութեամբդ ։ Տէ՛ր
մերով Յիւ Քիւ ։ Ամէն ։
սաղ. Տէ՛ր լուր աղօթից իմոց ։
ձյն. Եւ աղաղակիմ առ քեզ եկեսցէ ։ սաղ. Օրհնեսցուք զՏէր ։
ձյն. Այ գոհութիւն ։
սաղ. Ողջոյն քեզ Մարիամ լի
շնորհօք Տէր ընդ քեզ ։
ձյն. Օրհնեցեալ ես դու ի կանայս
և օրհնեցեալ է պտուղ որովայնի
քո Յիսուս ։
Օրհնեսցէ զմեզ սրբուհի կոյս Մա-
րիամ հանդերձ գթած զաւակին
իւրով ։ Ամէն ․

## Ի ԱՌԱՋԻ ԺԱՄՈՒՆ ։

Ողջոյն քեզ Մարիամ լի
շնորհօք Տէր ընդ քեզ ։
ձյն. Օրհնեցեալ ես դու ի կանայս ։
Այ յօգնել ինձ ։
ձյն. Եւ Տէր յընկերել ։
սղ. Փառք Հօր, և Որդւոյ ․
Որ էր ի սկզբանն, Ալէլուեա ։
կամ Գոհութիւն ։

Երգ.

Յիշեա՛ արարող մեր փրկութեան,
որ ի մէջ կուսին անապականին,
ծնանելով առանց սերման,
առեր զմարմին մեր կերպարանաւ:
Մայր ողորմութեան ես աղբիւրն,
աղբիւր շնորհաց անսպառելի,
աղաչեա՛ ի թշնամեաց մեր ազատել
ի ժամ մահու ընդդէմ մեր ...
խաղի:
Փառք քեզ ծնելոյդ ի մէջ կուսին,
որ ես գովեալ յամենեցունց,
ընդ Հօր և ընդ Սուրբ Հոգւոյդ փառաւորեալ,
ի յանվախճանն միշտ յաւիտեանս:
Ամէն.

Սաղմոս 119.

Ի նեղութեան իմում ես առ Տր կարդացի, և լուաւ ինձ Տր փրկելով զանձն իմ, ի շրթանց նենգաւորաց, և ի լեզուէ չարէ:
Զի՛ տացի քեզ, կամ զի՛ յաւելցի, լեզու նենգաւոր:
Սլաքս նետաց հզօրի զի մխեալ են կայծակամբք կործանչաց:
Վայ ինձ զի ընդ երկար եղև պանդխտութիւն իմ, զի բնակեցայ ես ի վրանս Կեդարու:
Բազում անգամ բնակեցաւ անձն իմ, ընդ այնոսիկ որք ատէին զողջոյն:

Եւսի

եան էի խաղաղարար , յորժամ խօս_
սէի մարտնչէին ընդ իս ։
Փառք Հօր , և Որդւոյ , և Հոգւոյն
սրբոյ ։        Սաղմոս 120 .

Համբարձի զաչս իմ ՚ի լերինս ,
ուստի եկեսցէ ինձ օգնութիւն ։
Օգնութիւն իմ ՚ի Տէ եկեսցէ , որ
արար զերկինս և զերկիր ։
Մի՛ տացէ ՚ի սասանութիւն զոտս քո ,
և մի՛ ննջեսցէ պահապանն քո ։
Ո՛չ ննջեսցէ , և ո՛չ ՚ի քուն երթայ
պահապանն Իսրայէլի ։
Տր պահեսցէ զքեզ , և Տր ընդ հովա_
նի աջոյ ձեռանն քում ։
Արեգակն ՚ի տուէ քեզ մի՛ մերձե_
ցէ , և մի՛ լուսին ՚ի գիշերի ։
Տր պահեսցէ զքեզ յամենայն չա_
րէ , պահեսցէ Տր զանձն քո ։
Տր պահեսցէ զմուտս և զելս քոյ ,
յայսմ հետէ մինչև յաւիտեան ։
Փառք Հօր , և Որդւոյ , և Հոգւոյն
սրբոյ .        Սաղմոս 121 .

Ուրախ եղէ ես որք ասէինն ,
՚ի տուն Տն երթիցուք մեք ։
Հաստատուն կային ոտք մեր , առ դր_
ուն քո Երուսաղէմ ։
Երուսաղէմ շինեալ իբրև զքաղաք , և
հաղորդութիւն իւր , շուրջ զնովաւ ։
Անդ ելանէին ազգք ազգք Տն ,
վկայութիւն Իսրայէլի , խոստովանե_

լինել անուանն Տեառն ։
Այդ արփիալքն են այժմու զատուա-ծոյն, այժմու արփիալ են ի սուրբ Դաւթի ։
Հայցեք զողջոյնս Յերրորդութեան, և զշնութեան որք սիրէք զՏր ։
Եղիցի խաղաղութիւն ի զօրութեան քում, և շինութիւն յաշտարակս յամուրս քո ։
Վն եղբարց և ընկերաց իմոց, խօսեցայ զխաղաղութիւն, վն քո, և վն տան Տն ԱԾյ մերոյ, խնդրե-ցից զբարութիւն ի քեզ ։
Փառք Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ ։ Անթիփօն .
Առաւօտին այսմ զես գովել զքեզ կայր արարչեալ, և տուր ինձ զօ-րութիւն ընդ դէմ թշնամեաց քոց ։
Գովուխ . Եկղէս. 24.
Ի սկզբանէ և յառաջ քան զյաւի-տեանս ստեղծեալ եղէ, և մինչև ի հանդերձեալ աշխարհն, ոչ պակասեցայց, և ի բնակութեան սրբոյ, առաջի նորա պաշտամունս արարի ։
Մղմ. ԱԾ զօրութեան .
Մղ. Յետ ծննդեանն կոյս անարա-տ կան մնացեր. Սրբուհի Աստուածածին բարեխօսեա վն մեր ։ Կոյս անարատ ։
Փառք Հօր ։ Յետ ծննդեանն ։
Մղ. Օրհնեցեալ ես դու ի կանայս ։
Մղ.

ժղվ. Եւ օրհնեցեալ է պտուղ որովայ-
նի քո ՅՍ ՔՍ։
տղ. Տէր լուր աղօթից։
ժղվ. Եւ աղաղակիս։ Աղօթք.

Աղաչեմք ՚ի քէն Տէր զշնորհս քո ՚ի սիրտս մեր, որ որք զՏր-
եառն հրեշտակին աւետաւորութեամբ ծա-
նեաք զմարմնաւորութիւն միածնի
որդւոյ քո, նորին չարչարանօքն և
որ խաչին զօրութեամբ, հասցուք ՚ի
փառս յարութեան։ ՏԻ մերով։
Ամէն։
տղ. Տէր լուր աղօթից.
ժղվ. Եւ աղաղակիս։
տղ. Օրհնեսցուք զՏէր։
ժղվ. ԱՅ գոհութիւն.

# Ի ԵՐՐՈՐԴ ԺԱՄՈՒՆ

ՈՂջոյն քեզ Մարիամ լի՛ շնորհօք
Տէր ընդ քեզ. Օրհնեցեալ ես դու.
ԱՅ ՚ի օգնել ինձ նայեաց.
ժղվ. Եւ Տէր ՚ի յօգնել ինձ.
տղ. Փառք Հօր, և Որդւոյ.
ժղվ. Որպէս էր ՚ի սկզբանն։ Ալէլուիա.

Երգ.

Յիշեա արարող մեր փրկութեան.
Մայր աստուածութեան որ տիրուհի.
Փառք քեզ Տէր ծնելոյդ ՚ի ՄՐՄ կուս-

Սաղմոս 122.

Առ քեզ Տէր համբարձի զաչս իմ, որ բնակեալդ ես յերկինս։
Ահա աչք ծառայի ի ձեռն Տեառն իւրոյ, և ահա աչք աղախնոյ ի ձեռն տիկնոջ իւրոյ։
Այնպէս են աչք մեր առ քեզ Տէր Աստուած մեր, մինչև ողորմեսցիս ի վերայ մեր։
Ողորմեա մեզ Տէր ողորմեա մեզ, զի բազում լցաք արհամարհանօք։
Եւս առաւել լցան անձինք մեր նախատանօք, որք նախատէին զմեզ և արհամարհանօք ամբարտաւանիցն։
Փառք Հօր, և Որդւոյ.

Սաղմոս 123.

Եթէ ոչ Տէր էր ընդ մեզ ասասցէ Իսրայէլ, եթէ ոչ Տէր էր ընդ մեզ։
Ի յառնել մարդկան ի վերայ մեր, կենդանւոյն կլանել կարէին զմեզ։
Ի բարկանալ սրտմտութիւն նոցա ի վերայ մեր, ապա և ջուրք ընկղմէին զմեզ։
Ընդ ուխս անցին անձինք մեր, անցին անձինք մեր, ընդ ուխս անդնդայինս։
Օրհնեալ է Տէր, որ ոչ ետ զմեզ յորս ատամանց նոցա։

Անձինք մեր ապրեցան որպէս ճնճ-ղուկ, 'ի որոգայթէ որսողաց.
Որոգայթք նոցա փշրեցան, եւ մեք ապրեցաք.
Օգնութիւն մեր 'ի անուանէ Տեառն, որ արար զերկինս եւ զերկիր:
Փառք Հօր, եւ Որդւոյ.

Սաղմոս 124.

Որ յուսայ 'ի Տէր իբրեւ զլեառն Սիոն, մի՛ սասանեսցի յաւիտեան, որ բնակեալ է յԵրուսաղէմ.
Լերինք շուրջ են զնովաւ. Տէր շուրջ է զժողովրդեամբ իւրով յայսմ հետէ մինչեւ յաւիտեան.
Ոչ թողու Տէր զգաւազան մեղաւորաց, 'ի վիճակս արդարոց, եւ արդարք մի՛ ձգեսցեն զձեռս իւրեանց յանօրէնութիւն.
Բարի արա Տէր բարեաց, եւ ուղղոց որ ուղիղ են սրտիւք.
Զխոտորեալսն 'ի խաբէութիւնս, տարցի Տէր, ընդ այնոսիկ որ գործեն զանօրէնութիւն, խաղաղութիւն 'ի վերայ Իսրայէլի:
Փառք Հօր, եւ Որդւոյ.
Անթիփոն. Խնդա Սիոնական լոյս, զի դու միայն զամենայն հերձուածութիւնս կործանեցեր ընդ ամենայն ախտեղէնս:

Գլուխ. Եկլէս. 24.

Եւ այսպէս 'ի Սիոն հաստատեցայ և 'ի քաղաքի սրբեցելում նոյն-պէս հանգեայ, և Յերուսաղէմ իշխանութիւն իմ։

պհ. Այ գոհութիւն.

սղ. Սբհի Մարիամ՝ Մայր քի ։ Լո՛ւր զաղաչանս ծառայից քոց.

պհ. Եւ զերկնային թագաւորն ըն-կալեալ բեր առ մեզ ։ Լո՛ւր զա-ղաչանս. Փառք Հօր.

սղ. Բարեխօսեա՛ վս մեր սրբուհի Ածա. պհ. Զի արժանիք լիցուք։ Տէր լո՛ւր աղօթից իմոց.

պհ. Եւ աղաղակ իմ առ քեզ եկեսցէ ։

Աղօթք.

Շնորհեա՛ մեզ ծառայիցս քոց Տէր ԱԾ ամենայն մշտնջենաւոր առող-ջութեամբ հոգւոյ և մարմնոյ ուրախա-նալ, և փառաւորեալ բարեխօսու-թեամբ երանուհւոյ, և միշտ կուսին Մարիամու Աստուածածնի՝ այժմ ազա-տիլ 'ի տրտմութենէ և վայելել յա-ւիտենական խնդութիւն. Տն մե-րով. Ամէն.

սղ. Տէր լո՛ւր աղօթից.

պհ. Եւ աղաղակ իմ.

սղ. Օրհնեսցուք զՏր.

պհ. Այ գոհութիւն.

# Ի ՎԵՑԵՐՈՐԴ
## ժամուն.

Ողջոյն քեզ Մարիամ՝ լի շնորհօք Տէր ընդ քեզ։ Օրհնեցեալ ես-Աճ՛ յօրհնել խնձ. մխիթարէ Տէր յըն-կերել։ Փառք Հօր։ Որ էր։

Աղերսեմ. Երգ.

Յիշեա արարող մեր փրկութեան։
Մայր ազատութեան որ տիրուհի։
Փառք քեզ Տէրոջդ թագուհի.

Սաղմոս 125.

Դարձուցանել Տն զգերութիւն Սիոնի, եւ եղաք մեք մխիթարեալք։

Յայնժամ՝ լցան բերանք մեր խնդութեամբ, եւ լեզուք մեր ցնծութեամբ։

Յայնժամ՝ ասասցեն 'ի հեթանոսս՝ մեծ արար Տէր զառնելն իւր ընդ նոսա, մեծ արար Տէր զառնելն իւր ընդ մեզ, եւ մեք եղաք ուրախացեալք։

Դարձո՛ Տէր զգերութիւն մեր, որ-ղուխս 'ի հարաւոյ, որք վարեին արտասուօք ցնծութեամբ հնձեսցեն։

Երթային երթային՝ եւ լային, որք բարձեալ տանէին զսերմանիս իւրեանց։

Գալով եկեսցեն՝ եւ ցնծասցեն, որոց առեալ բերիցեն զխուրձս իւրեանց։

Փառք Հօր, և Որդւոյ.

## Սաղմոս 126.

Եթէ ոչ Տէր շինէ զտունն՝ ի նա- նիր վաստակին շինողք նորա։ Եթէ ոչ Տէր պահէ զքաղաք, ըն- դունայն արթնին պահապանք նորա։ Նանիր է ձեզ յառնել կանխաւ, որք՝ այժմ մինչև էք նստելոցն՝ որք ուտէք զհաց ցաւոց։ Ի ժամանակի, ուր տացէ քուն սի- րելեաց իւրոց, ժառանգութիւն Տեառն որդիք են, որոց վարձք իւր են, այն է պտուղ որովայնի իւրոյ։ Որպէս նետք ի ձեռս հզօրի, այն- պէս են և որդիքն թօթափելոց։ Երանի՛ որ լցցէ զցանկութիւն իւր ի նոցանէ, մի՛ ամաչեսցեն՝ յորժամ խօսիցին թշնամիք նոցա ընդ նո- սա ի դրունս։

Փառք Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն Սբյ։

## Սաղմոս 127.

Երանի ամենեցուն՝ որք երկնչին ի Տէ, և գնան ի ճանապարհս նորա։

Զվաստակս ձեռաց քոց կերիցես՝, երանի է քեզ՝ և բարի եղիցի։ Կին՝ քո իբրև որթ պտղաբեր յան- կիւնս տան քոյ, որդիք քո որպէս նոր տունկ ձիթենեաց շուրջ զսե- ղանով քով։

Աղաչեմ օրհնեալ ամենայն մարդ՝
որ երկինս ի ՏՐ, և օրհնեսցէ զքեզ
ՏՐ ի Սիոնէ :
Եւ տեսցես դու զբարութիւն Երուսա_
ղեմի, զամ աւուրս կենաց քոց :
Տեսցես դու զորդիս որդւոց քոց,
խաղաղութիւն ի վերայ Իսրայէլի :
Փառք Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն
Սրբոյ :
Աւետիքոն. Գառն և Որդի ԱՅ
ծնող կոյս խնդա և ուրախ լեր,
որ ԱՍտուածն.
Գործ. Եփեսա. ԶԴ.
Եւ արժանացայց ի ժամանակս
ապաշխարութ, և ի միջնորդ ԱՅ
խելք, ժառանգութիւն նորա, և ի
բանն ամենայն կարգաւն իմ.
ողո. ԱՅ գթութի : ասէ. Բարեխ_
օսեան մեզ առ ԱՍտուածն :
ով. Զի արժանի լինիցիմք խոստմանցն
ՔՍ : Մրջին ԱՍտուածին : Փառք.
Բարեխօսեա : ով. Լսելեաց ձայնի
ԱՅ. ողո. Եւ բժշկեսցի.
ով. ՏՐ լուր : ողո. Եւ աղաղակ :

Աղօթք.

Պաշտպանեա ՏՐ զծառայս քո
յամենայն չարութենէ խաղաղութեամբ
և զբարութեամբ ի քէն, փառա_
ւորեալ բարեխօսութեամբ Երանու_
հւոյ և միշտ կուսին Մարիամու
ԱԾ.

Աստուածածին, 'ի բնութիւն Թագաւորաց. անհասն արարիչն Տէր : Ամէն.
ող. Տէր լուր աղօթից.
դպ. Եւ աղաղակն իմ.
ող. Օրհնեսցուք զՏէր :
դպ. Ած շնորհութի.

# ԻՆՆԵՐՈՐԴ ԺԱՄՈՒՆ.

Ողջոյն քեզ Մարիամ լի շնորհօք. Տէր ընդ քեզ.
Օրհնեցեալ ես դու 'ի կանայս և օրհնեցեալ է : Ած 'յ օգնել ինձ.
դպ. Եւ Տէր 'յ ընկերել. Փառք Հօր. Ալէլուիա. Երգ.
Յիշեա արարող մեր փրկութեան. Մայր աստուածութեան որ անարատ փառք քեզ Ծնելոյդ 'ի կուսէ.

Սաղմոս 128.

Բազում անգամ մարտեան ընդ իս 'ի մանկութենէ իմմէ՝ ասասցէ Իսրայէլ.
Բազում անգամ մարտեան ընդ իս 'ի մանկութենէ իմմէ՝ և ինձ ոչ յաղթեցին.
Զթիկունս իմ հարին մեղաւորք, ընդ երկար արարին զանօրէնութիւնս իւրեանց.
Տէր արդար է և խորտակէ զուլն մեղաւորաց.

Ա[illegible]

Ամաչեսցեն՝ և յետս դարձցին ա-
մենեքեան, որք ատեն զՍիոն.
Եղիցին նոքա իբր խոտ տանեաց,
որ մինչև ի բուռն եկեալ չորասցի.
Որոյ ոչ ելից զբուռն իւր հնձօ-
ղն, և ոչ զգիրկս իւր՝ որ զորայն
ժողովէր.
Ոչ ասացին անցանողքն՝ որք ան-
ցանէին առ նոքօք, Թէ օրհնութիւն
Տն ընդ ձեզ, և օրհնեցաք զձեզ
յանուանն Տն.
Փառք Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն
սրբոյ.
Սաղմոս 129.
Ի խորոց կարդացի առ քեզ Տր.
Տր լուր ձայնի իմում.
Եղիցին ականջք քո, ի լուր ձայնի
աղօթից իմոց.
Թէ զանօրէնութիւնս պահես Տր.
Տր՝ ո կարէ կալ առաջի քո, զի ի
քէն է քաւութիւն:
Վասն անուան քո համբերի Տր,
համբերէր անձն իմ՝ բանի քում, յու-
սացաւ անձն իմ ՚ի Տր:
Ի պահէ առաւօտու մինչև ցերե-
կոյ, ի պահէ առաւօտու՝ յուսասցէ
Իսրայէլ ի Տր.
Ի Տէ է ողորմութիւն բազում, ի
նմանէ է՝ փրկութիւն, և նա փրկեսցէ
զԻսրայէլ ամենայն անօրէնութեանց նորա.
Փառք Հօր, և Որդւոյ.
Սաղ-

Սաղմոս 130.

ելեալ արտաքս ելաց դառնապէս՝ս ։ Իբրեւ այգ եղեւ՝ խորհուրդ արարին ամ քահանայապետքն եւ ծերք ժողովրդեանն վասն Յի սպանանել զնա ։ Կապեցին զնա, եւ տարան զնա, եւ ետուն ՚ի ձեռս պոնտացւոյ Պիղատոսի դատաւորին ։ Յայնժամ իբրեւ ետես Յուդա որ մատնեացն զնա թէ դատապարտեցաւ՝ զղջացաւ, եւ դարձոյց զարծաթն առ քահանայապետսն եւ ծերս ժողովրդեանն ։ Եւ ասէ՝ մեղայ, զի մատնեցի զարիւն արդար, եւ նոքա ասեն . մեզ չէ փոյթ . դու գիտես ։ Եւ ընկեց զարծաթն ՚ի տաճարին եւ գնաց, եւ չոգաւ խեղդեցաւ ։ Իսկ քահանայապետքն առեալ զարծաթն ասեն ։ Ոչ է արժան ընկենուլ զայդ ՚ի կորբանն, քանզի գին արեան է ։ Խորհուրդ առեալ գնեցին նովաւ զագարակ բրտին ՚ի գերեզմանս օտարաց ։ Վասն այնորիկ կոչեցաւ ագարակն այն ագարակ արեան մինչեւ ցայսօր ։ Յայնժամ լցաւ՝ որ ասացաւ ՚ի ձեռն Երեմիայ մարգարէին՝ առին զերեսուն արծաթին զգին վաճառելոյն . զոր առին յորդւոցն Իղի ։ Եւ ետուն զնա յագարակն բրտի . որպէս հրամայեաց ինձ Տր ։ Եւ Յս եկաց առաջի

դա_

դատաստանօրէն , եհարց զնա դատաս-
տօրն՝ և ասէ , դու ես թագաւորն
հրէից , և Յս̃ ասէ , դու ասես ։
Եւ ՚ի չարախօսելն նո̃ ՚ի քահանայա-
պետացն և ՚ի ծերոց . ոչ ինչ ետ
պատասխանի ։ Յայնժամ ասէ ցնա
Պիղատոս , ոչ լսես՝ որ չափ զքեզ
հակառակ քո վկայեն ։ Եւ ոչ ետ
նմա պատասխանի՝ և ոչ բանն մի ,
մինչև զարմանալ դատաւորին յոյժ ։
Բայց ըստ տօնի սովոր էր դատա-
ւորն արձակել ժողովրդեանն կա-
պեալ մի զոր կամէին ։ Ունէին
յայնժամ կապեալ մի նշանաւոր՝
որում անուն էր Բարաբբա ։
Իբրև ժողովեցան՝ ասէ ցնոսա Պի-
ղատոս , զո՞ կամիք ՚յերկուց աս-
տի զի արձակեցից ձեզ՝ զԲա-
րաբբա , եթէ զՅս̃ զանուանեալն
Քս̃ ։ Քանզի գիտէր՝ թէ առ նա-
խանձու մատնեցին զնա ։ Եւ մինչ
դեռ նստէր յատենին . առաքեաց
առ նա կինն իւր՝ և ասէ ։ Մի ինչ
քո և արդարոյն այնորիկ ։ զի բա-
զում ինչ անցին ընդ իս այսօր յա-
նուրջս վս̃ նորա ։ Իսկ քահանայա-
պետքն և ծերքն հաւանեցուցին
զժողովուրդսն՝ զի խնդրեսցեն
զԲարաբբայ՝ և զՅս̃ կորուսցեն ։
Պատասխանի ետ դատաւորն՝ և
ասէ

ասէ ցնոսա ։ զո՞ կամիք . զի արձա-
կեցից ձեզ 'ի երկուց այդի ։ Եւ նոքա
ասեն՝ զԲարաբբայ ։ Ասէ ցնոսա Պի-
ղատոս ։ Զինչ արարից զՅս զա-
նուանեալն Քս ։ Ասեն ամենե-
քեան՝ խաչեսցի , եւ նա ասէ զինչ
չար արար , եւ նոքա առաւել եւս
աղաղակէին եւ ասէին . խաչեսցի ։
Եւ տեսեալ Պիղատոսի թէ ոչ ինչ
օգնէ . այլ առաւել խռովութիւն
լինի . առեալ ջուր լուաց զձեռս
առաջի ժողովրդեանն եւ ասէ ։ Քա-
ւեալ եմ ես յարենէ արդարոյդ
այդորիկ , դուք գիտասջիք ։ Պա-
տասխանի ետ ամ ժողովուրդն եւ
ասէ ։ արիւն դորա 'ի մեր վերայ եւ 'ի
վերայ որդւոց մերոց ։ Յայնժամ
արձակեաց 'նոց զԲարաբբայն , եւ
զՅս գանեհարեալ ետ 'ի ձեռս զի
խաչեսցի ։ Յայնժամ զինուորք
դատաւորին առին զՅս յապարա-
նսն . եւ ժողովեցին 'ի վերայ նր զամ
զօրն ։ Մերկացին զնա . եւ
արկին զնովաւ քղամիդ կարմիր ։
Եւ հիւսեալ պսակ 'ի փշոց եդին
'ի գլուխ նր , եւ եղեգն յաջոյ ձե-
ռին նր , 'ի ծունր իջեալ առաջի
նր կատակէին եւ ասէին ։ ողջ եր
թագաւոր հրէից ։ Եւ թքեալ 'ի
նա առնուին զեղէգնն եւ հարկանէին

զգլուխ

զգլուխ նորա ։ Եւ յորժամ ձա-
ղեցին զնա՝ մերկացուցին ի նմա-
նէ զքղամիդն , և ագուցին նմա
զիւր հանդերձսն , և տարան զնա
ի խաչ հանել ։ Եւ ելեալ արտա-
քս , գտին այր մի կիւրենացի ա-
նուն Սիմոն , զնա կալան պատարագ՝ զի
բարձցէ զխաչն նորա ։ Եւ եկեալ ի
տեղին անուանեալ Գողգոթա որ է
տեղի կառափելոյ ։ Ետուն նմա
գինի ընդ լեղի խառնեալ , և ի-
բրև ճաշակեաց՝ ոչ կամէր ըմպել ։
Եւ հանեալ զնա ի խաչ , բաժանե-
ցին զհանդերձս նորա վիճակաւ , զի
լցցի բանն՝ որ ասացաւ ի մարգա-
րէէն , բաժանեցին զհանդերձս իմ
յիւրեանս՝ և ի վերայ պատմուճանի
իմոյ արկին վիճակս ։ Եւ նս-
տեալ պահէին զնա ։ Եւ եդին ի
վերայ գլխոյ նորա գրեալ զվնաս նորա ,
թէ Այս է Յիսուս թագաւորն Հրէից
Յայնժամ հանեն ընդ նմա ի խաչ
երկուս աւազակս . մի յաջմէ նորա
և մի յահեկէ ։ Եւ որք անցա-
նէինն , հայհոյէին զնա . շարժէին
զգլուխս իւրեանց ։ Եւ ասէին ,
վա՜հ՝ որ քակէիր զտաճարն Այ և
զերիս աւուրս շինէիր զնա՝ ապրեցո
զքեզ ։ Եթէ որդի ես Այ էջ ի
խաչէդ ։ Նոյնպէս և քահանայա-

պետք

պետքն ձաղէին հանդերձ դպրօքն
և ծերովքն՝ և ասէին ։ Զայլս ապրե-
ցոյց՝ զանձն ոչ կարէ ապրեցուցա-
նել ։ Եթէ թագաւոր է՝ Իսրա-
յէլի՝ իջցէ այժմ 'ի խաչէդ և հաւատաս-
ցուք 'ի նա ։ Եթէ յուսացաւ յԱՅ·
փրկեսցէ այժմ զդա՝ եթէ կամի
զդա · քանզի ասաց եթէ ԱՅ որ-
դի եմ ։ Զնոյն և աւազակքն որ
խաչեալ էին ընդ նմա նախատէին
զնա ։ Եւ 'ի վեցերորդ ժամէ աւուրն
խաւար եղև 'ի վերայ ամ̃ երկրի
մինչև ցիններորդ ժամն ։ Եւ ընդ ժա-
մանն աղաղակեաց ՅՍ 'ի ձայն մեծ՝ և
ասէ ։ Էլի · Էլի · լամասաբաքթա-
նի ? այս է՝ ԱՅ իմ · ԱՅ
իմ · ընդէր թողեր զիս ։ Ոմանք
յայնցանէ որ անդն կային · իբրև
լուան ասէին ։ զԵղիա կարդայ ։
Եւ վաղվաղակի ընթացեալ մի
'ի նոցանէ · էառ սպունգ մի քացա-
խով հարեալ յեղեգան եդ ըմպե-
ցնէր ։ Եւ այլքն ասէին · թոյլ
տուր տեսցուք եթէ գայ Եղիա փրկել
զդա ։ Եւ ՅՍ միւսանգամ աղաղա-
կեաց 'ի ձայն մեծ՝ և արձակեաց
զոգին ։ Եւ ահա վարագոյր տա-
ճարին պատառեցաւ յերկուս՝ 'ի վերուստ
մինչև 'ի վայր ։ երկիր շարժեցաւ ,
և վէմք պատառեցան ։ Եւ գերեզ-
մանք

զմնիք բազմաւ , և բազում մարմինք
նշխարաց սրբոց յայտնեալ : Եւ
եկեալք 'ի գերեզմանացն յետ յա-
րութեան նր , մտին 'ի քաղաքն սբ ,
և երևեցան բազմաց : Իսկ հարիւ-
րապետն և որք ընդ նմա պահէին
զՅս՝ իբրև տեսին զշարժումն և
զեղեալսն երկեան յոյժ՝ և ասեն :
արդարև Այ որդի էր սա : Էին
անդ կանայք բազումք , հայէին 'ի
հեռաստանէ՝ և հայէին : որք եկին
զհետ Յի 'ի Գալիլեէ պաշտել զնա
Յորս էր Մարիամ Մագդաղենացի
և Մարիամ Յակոբայ՝ և Յովսեայ
մայր , և մայր որդւոցն Զեբե-
դեայ : Եւ իբրև երեկոյ եղև՝ եկն
այր մի մեծատուն Յարիմաթեայ՝
որում անուն էր Յովսէփ . որ ա-
շակերտեալ էր Յի : Սա մա-
տուցեալ առ Պիղատոս խնդրեաց
զմարմինն Յի : յայնժամ Պիղա-
տոս հրամայեաց տալ զմարմինն :
Եւ առեալ զմարմինն Յովսէփ
պատեաց 'ի կտաւ սբ : Եւ եդ 'ի
նոր գերեզմանի զոր փորեաց 'ի
վիմի , Եւ թաւալեցուցեալ կափա-
րիչ դրանն գերեզմանին վէմ մի
մեծ՝ և գնաց : Անդ էր Մարիամ
Մագդաղենացի և միւս Մարիամն ,
նստէին հանդէպ գերեզմանին :

Եւ

Եւ ՛ի վաղիւ անդր՝ որ է՝ յետ ուրբաթուն․ ժողովեցան քահանայապետքն և փարիսեցիք առ Պիղատոս ։ Եւ ասեն, Տէր յիշեցաք զի մոլորեցուցիչն այն ասէր, մինչ կենդանին էր, թէ յետ երից աւուրց յառնեմ։ Արդ՝ հրամայեա՛ զգուշանալ գերեզմանին մինչեւ երիս աւուրս, գուցէ եկեալ աշակերտքն գիշերի գողասցեն զնա՝ և ասասցեն ժողովրդեանն թէ յարեաւ ՛ի մեռելոց, և եղիցի յետին մոլորութիւնն չար քան զառաջինն ։ Ասէ ցնոսա Պիղատոս, ունիք զօրականս․ երթայք զգուշացարուք՝ որպէս և գիտէք ։ Եւ նոքա երթեալ զգուշացան գերեզմանին, և կնքեցին զվէմն հանդերձ զօրականօքն ։



ՍԲ ՄԱՐԿՈՍ·

# ՉԱՐՉԱՐԱՆՔ ՏԵԱՌՆ

## Մերոյ Յս Քի ըստ Մար-կոսի · գլուխ ԺԴ.

ԵՒ էր Զատիկ եւ բաղարջա-կերք · յետ երկուց ա-ւուրց ։ եւ խնդրէին քա-հանայապետքն եւ դպիրքն՝ թէ զիարդ զՅս նեն-գութեամբ կալցեն , եւ սպա-նանիցեն ։ Բայց ասէին թէ մի՛ ՚ի տօնի աստ՝ մի՛ գուցէ խռովութիւն լինիցի ՚ի ժողովրդեանն։ Եւ մինչ էր Յս ՚ի Բեթանիայ ՚ի տան Սիմոնի բորոտի եւ բազմեալ էր եկն կին մի որ ունէր շիշ իւղոյ նարդեան ազնուի մեծագնոյ։ եւ բեկեալ զ շիշն եհեղ ՚ի վերայ գլխոյ նորա ։ Եւ էին ոմանք, որք զայրացեալ էին ՚ի միտս իւրեանց եւ ասէին, ընդէր եղեւ կորուստ իւղոյդ այդորիկ ։ Մարթ էր զայդ իւղ վաճառել աւե-լի քան զերեք հարիւր դահեկանի · եւ տալ աղքատաց , եւ զայրանային ընդ նմա ։ Եւ Յս ասէ թողուք , թողուք զդա ։ զի՞ աշխատ առ-նէք , զի գործ մի բարւոք գործեաց

զաս

դա յիս ։ Յամ՚ ժամ՚ զաղքատս ընդ ձեզ ունիք , և յորժամ կամիք կարող էք առնել նմա բարիս ։ այլ զիս ոչ յամ՚ ժամ՚ ընդ ձեզ ունիք ։ Դա զոր ունէր , արար ։ յառաջագոյն խնկեաց զմարմին իմ ՚ի գերեզմանն ։ Ամէն ասեմ ձեզ ։ ուր և քարոզեսցի աւետարանս այս ընդ ամ՚ աշխարհ . և զոր արար դա խօսեսցի յիշատակի դորա ։ Եւ Յուդայ Իսկարիովտացի մի ՚յ երկոտասանից անտի . գնաց առ քահանայապետսն՝ զի մատնեսցէ զնա նոցա ։ Նոքա իբրև լուան՝ խնդացին , և խոստացան տալ նմա զարծաթ , և խնդրէր թէ զիարդ պատշաճ մատնեսցէ զնա ։ Եւ յառաջնում աւուր բաղարջակերացն . յորում զՊասեքն զենուին , ասեն ցնա աշակերտքն , ուր կամիս՝ երթիցուք՝ և պատրաստեսցուք զի կերիցես զՊասեքն ։ Եւ առաքէ երկուս ՚յ աշակերտաց անտի՝ և ասէ ցնոսա ։ Երթայք ՚ի քաղաք , և պատահեսցի ձեզ այր մի . որ սափոր ջրոյ յուսն ունիցի ։ երթայք զհետ նորա ։ Եւ յոր տուն մտանիցէ . ասասջիք տանուտեառն . վարդապետ ասէ՝ ուր են իջեվանքն իմ , ուր աշակերտօքս ուտիցեմ զՊասեքն ։ Եւ նա ցուցցէ

ցէ ձեռն վերնատուն մի մեծ զար_
դարեալ ․ և անդ պատրաստեսջիք
մեզ ։ Եւ գնացին աշակերտքն
նորա , և եկին ՚ի քաղաքն և
գտին որպէս ասացն նոցա ։ և պատ_
րաստեցին զԶատիկն ։ Եւ իբրև
երեկոյ եղև գայ երկոտասանիւքն
հանդերձ ։ Եւ իբրև բազմեցան ․
և մինչ ուտէին , ասէ Յս՛ ամէն
ասեմ ձեզ՝ զի մի ՚ի ձէնջ մատ_
նեսցէ՛ զիս , որ ուտէ հաց ընդ
իս ։ Եւ նոքա սկսան տրտմել՝ և
ասել ցնա մի ըստ միոջէ մի թէ ես ։
Նա ասէ ցնոսա , մի ՚յ երկոտասա_
նից այտի ․ որ մխեաց ընդ իս
զձեռն ՚ի սկուտեղն ։ Այլ որ_
դի մարդոյ երթայ՝ որպէս գրեալ է
վասն նորա ։ բայց վայ իցէ մարդոյն
այնմիկ՝ յորոյ ձեռն որդի մարդոյ
մատնեսցի , լաւ էր նմա՝ թէ չէր
ծնեալ մարդն այն ։ Եւ մինչ
դեռ ուտէին նոքա ։ առեալ Յս
զհաց ։ և օրհնեալ եբեկ և ետ
նոցա և ասէ ։ Առէք՝ Այս է՝
մարմին իմ ։ Եւ առեալ բա_
ժակ գոհացեալ ետ նոցա ․ և
արբին ՚ի նմանէ ամենեքեան ։
Եւ ասէ ցնոսա , Այս է՝ Ա_
րիւն իմ նորոյ ուխտի ․ որ փոխա_
նակ բազմաց հեղանի ։ Ամէն ասեմ
ձեզ ,

ձեզ, թէ ոչ ևս յանէից ընկնել ՚ի բերդ որոյ մինչև ցայն ցայն՝ յորժամ որոց ընդ նոյ՚ յարքայութեն Այ: Եւ դարձեալ եղեն ՚ի յեսուն ձիթենեաց: Եւ ասէ ցնոսա Յս. ամենեքեան գայթագղելոց էք ՚ի յիս յայսմ գիշերի. զի գրեալ է թէ հարից զհովիւն, և ցրուեսցին ոչխարքն: Այլ յետ յարութեան իմոյ յառաջեցայց եկեալ քան զձեզ ՚ի Գալիլեա: Եւ Պետրոս ասէ ցնա, թէպէտ և ամենեքին գայթագղեսցին ՚ի քեզ, այլ ես ոչ: Եւ ասէ ցնա Յս, ամէն ասեմ քեզ, թէ դու այսօր ՚յայսմ գիշերի նախքան հաւ զձայն երկիցս ածելոյ իցէ՝ երիցս ուրանաս զիս: Իսկ նա առաւել ևս խօսէր: Եթէ մեռանիլ ևս հանդիպի ընդ քեզ, զքեզ ոչ ուրացայց. նոյնպէս և ամենեքեան ասէին: Եւ գան ՚ի գեօղն՝ որում անուն էր Գեթսեմանի: և ասէ աշակերտացն իւր: Նստարուք աստ՝ մինչ ես յաղօթս կացից: Եւ առեալ ընդ իւր զՊետրոս՝ և զՅակոբոս՝ և զՅովհաննէս. և սկսաւ երկնչել և հոգալ: Եւ ասէ ցնոսա: տրտում է՝ անձն իմ մինչև ՚ի մահ. մնացէք աստ՝ և արթուն

արժանի կոչէք ։ Եւ մատուցեալ առաջի նորա մի յաստաղ․ անկեալ ի մէրայ երեսաց խոյրոյ յերկիր․ և կայր յաղօթս ։ զի եթէ հնար իցէ անցանել ի նմանէ ժամն ։ Եւ ասաց, Աբբա Հայր, ամենայն ինչ քեզ հնարաւոր է ։ անցո զբաժակս զայս յինէն ։ բայց ոչ որպէս ես կամիմ՝ այլ որպէս դու կամիս ։ Եւ գայ՝ և գտանէ զնոսա զի ննջէին, և ասէ ցՊետրոս ։ Սիմոն ննջես ։ ոչ կարացեր ժամ մի արթուն կալ ։ Արթուն կացէք և յաղօթս կացէք, զի մի մտջիք ի փորձութիւն․ ոգի խրախ յօժար է բայց մարմինս տկար ։ Եւ դարձեալ չոգաւ եկաց յաղօթս․ զնոյն բանն ասելով ։ Եւ դարձաւ միւսանգամ անդրէն․ եգիտ զնոսա ի քուն ։ (քանզի էին աչք նոցա ծանրացեալք) և ոչ գիտէին զինչ պատասխանի տացեն նմա ։ Եւ գայ երրորդ անգամ՝ և ասէ ցնոսա, ննջեցէ՛ք այսուհետև, և հանգիրուք ։ Բաւական է՛ եհաս ժամ ։ ահա մատնի Որդի մարդոյ ի ձեռս մեղաւորաց ։ Օ՛ն արիք․ գնասցուք, ահաւասիկ մերձեցաւ՝ որ մատնելոցն է՝ զիս ։ Եւ մինչդեռ նա զայն խօսէր գայ Յուդաս իս-

րիովտացի մի՛ յերկոտասանիցն ե-
կն. և ընդ նմա ամբոխ բազում՝
սուսերօք և բրօք. ՚ի քահանայա-
պետիցն և ՚ի դպրաց և ՚ի ծերոց:
Իսկ մատնիչն նորա տուեալ էր նո-
ցա նշան ասելով. զոր ես համ-
բուրեցից նա է, կալջիք զնա և տար-
ջիք զգուշութեամբ: Եւ մինչ եկն վաղ-
վաղակի մատուցեալ առ նա ասէ,
ողջ լեր Ռաբբի, և համբուրեաց
զնա: Եւ նոքա արկին ՚ի նա
ձեռս և կալան զնա: Եւ միոյ
յայլոցանէ որ զնովաւն կային
ձգեալ զսուր. և եհար զծա-
ռայ քահանայապետին. Եւ ՚ի
բաց եհան զունկն նորա: Պատաս-
խանի ետ ՅՍ և ասէ ցնոսա: Ի-
բրև ՚ի վերայ աւազակի եկիք սու-
սերօք և բրօք ունել զիս: Հանա-
պազ առ ձեզ էի և ուսուցանէի
՚ի տաճարին. և ոչ կալայք զիս:
այլ զի լցցին գրեանք: Յայնժամ
թողին զնա աշակերտքն ամենեքին
և փախեան: Եւ մին երիտասար-
դաց զհետ երթայր նորա արկե-
ալ զիւրև կտաւ մի ՚ի մերկութեան և
կալան զնա, և նորա թողեալ զկ-
տաւն փախեաւ մերկ ՚ի նոցանէ:
Եւ տարան զՅՍ առ քահանայապե-
տն, և եկին ընդ նմա ամենայն

քա-

բաժանմանցն և գայլիք և ծերքն: Իսկ Պետրոս ՚ի հեռաստանէ գնայր զհետ նորա մինչև ՚ի ներքս իսկ ՚ի գաւիթ քահանայապետին, և նստէր ընդ սպասաւորսն և ջեռնոյր առ հրովն: Իսկ քահանայապետքն և ամենայն ատեանն խնդրէին հակառակ Յի վկայութիւն ինչ, որ զնա մահու մատնեսցեն և ոչ գտանէին: Զի բազումք սուտ վկայութիւն տային ընդ դէմ նորա. և նման միաբանեալ ոչ էին վկայութիւնքն: Եւ Ոմանք յարուցեալ վկայէին սուտ զնմանէ, և ասէին: Թէ մեք լուաք ՚ի դմանէ որ ասէր, Ես քակեցից զտաճարդ զայդ ձեռագործ. և զերիս աւուրս շինեցից զայլ առանց ձեռագործի: Սակայն և այնպէս չէր նման վկայութիւն նոցա: Արար յառաջ քահանայապետն ՚ի մէջ հարցանէր ցՅս և ասէր. զի՞ ոչ տաս պատասխանի ատոյն. զի՞նչ դոքա վկայեն զքէն: Եւ Յս լռեալ կայր, և ոչ ինչ պատասխանի: Դարձեալ քահանայապետն հարցանէր ցնա կրկին անգամ և ասէր, Դու ես Քս որդի Ա՟Յ օրհնելոյն: Եւ Յս ասէ ցնա, Ես եմ: Բայց տեսանիցէք զորդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրու-

թեանն ԱՃ. եւ եկեալ ընդ ամպս
երկնից ։ Եւ քահանայապետն
զատաստանիւ դատաստանս իւր
առնէ, զի նոքա սխալեալ էին մեղ մի
այք ։ Եւ այլք զհայհոյութիւն,
զհայոյ իւրեանց ձեռն ։ Եւ անմեղ
ութեան դատապարտութիւն զնա՝ թէ
մահապարտ է ։ Եւ նմանք սպանա
նել զնա, եւ բոռնել զերեսս
նորա կապել եւ առնել ։ Մարդա
կաց ։ եւ ապտակս ապտակս
հարկանէին նմա ։ Եւ Պետրոս միայն
դեռ էր ՚ի խաւարի ՚ի դատաւորին.
այլ ապաւինեալ ՚ի քահանայապետին։
Եւ անծանօթ զնա՝ զի Գալիլեացի.
հայեցան ընդ նմա եւ ասէ . եւ զա
րձ Յիսուսի ՚ի հաւատացեալ էիր ։ Նա
ուրացաւ եւ ասէ . եւ ոչ գիտեմ եւ
ոչ ճանաչեմ զնա դուրս ասէր . եւ
իբրեւ ել յարտաքին զաւթին՝ եւ
հաւ խօսեցաւ ։ Աղախին եսես
զնա առաջնորդն . եւ սկսաւ ասել
այլոց, թէ սա ընդ նմա էր, թէ
եւ սա ՚ի նոցանէ է ։ Եւ նա զայր
ձեալ ուրացաւ . եւ յետ սակաւ
միոյ՝ զայրացեալ որք շուրջն կային,
ասէին ցՊետրոս . արդարեւ եւ դու
՚ի նոցանէ ես . քանզի Գալիլեացի
ես ։ Եւ սկսաւ նզովել եւ երդ
նուլ թէ ոչ գիտեմ զայր մարդն,

զոր ասէք : Եւ նոյնժամայն կրկին
հաւ խօսեցաւ . եւ յիշեաց Պետրոս
զբանն զոր ասաց ցնա Յս , թէ
մինչ հաւ երկիցս խօսեալ ,
երիցս ուրասցիս զիս , եւ սկսա-
ւ լալ : Եւ վաղվաղակի ընդ ա-
ռաւօտն , խորհուրդ արարեալ
քահանայապետիցն հանդերձ ծե-
րովքն եւ դպրօք եւ ամենայն ատենին
կապեցին զՅս՝ տարան եւ մատնե-
ցին Պիղատոսի : Եւ եհարց զնա
Պիղատոս . Դու ես Թագաւոր
Հրէից : Նա պատասխանի ետ
նմա եւ ասէ՝ դու ասես : Եւ չա-
րախօսէին զնմանէ յոյժ քահանա-
յապետքն : Իսկ Պիղատոս դար-
ձեալ հարցանէր զնա՝ ասելով ,
ոչինչ ինչ պատասխանի . տես՝
քանի ամբաստանեն զքէն : Եւ
Յս այնուհետեւ ոչինչ ետ պա-
տասխանի . մինչեւ զարմանալ յոյժ
Պիղատոսի : Բայց ըստ աւուր
տօնին արձակէր նոցա զմի կա-
լանաւոր . զոր խնդրէին խն-
դրէր : Եւ էր՝ որում անուն էր
Բարաբբան՝ որ կապեալ էր ընդ
խռովարարսն , որ ընդ խռովելն զայր
մի սպանեալ էր : Եւ մինչ ել ամ-
բոխն խնդրել՝ որպէս միշտ
առնէր նոցա : Պատասխանի ետ

Պիղատոս և ասէ ցնոսա․ կամիք, զի արձակեցից ձեզ զարքայն Հրէից։ Քանզի գիտէր թէ առ նախանձու մատնեցին զնա քահանայապետքն ։ որք և հաւանեցուցին զամբոխն զի և ս առաւել արձակեսցէ նոցա զԲարաբբայն ։ Դարձեալ պատասխանի ետ Պիղատոս և ասէ ցնոսա․ արդ զի՞նչ կամիք՝ թէ արարից զարքայն Հրէից ։ Եւ նոքա դարձեալ աղաղակեցին ՚ի խաչ հան զդա ։ Իսկ Պիղատոս ասէր ցնոսա․ զի՞նչ չար արար․ և նոքա առաւել ևս աղաղակէին․ ՚ի խաչ հան զդա ։ Իսկ Պիղատոս կամէր ժողովրդեանն բաւականել, արձակեաց նոցա զԲարաբբայն․ և զՅս̃ գանհարեալ ետ ՚ի ձեռս․ զի ՚ի խաչ ելանիցէ ։ Եւ զինուորքն տարան զնա ՚ի ներքս ՚ի գաւիթն՝ որ է պրատորիոնն էր և կոչեն միանգամայն զամենայն զօրականն ։ Եւ զգեցուցանեն նմա ծիրանիս․ և եդին նմա պսակ արարեալ ՚ի փշոց։ Եւ սկսան ողջոյն տալ նմա Ողջ եր Արքայդ Հրէից ։ Եւ ծեծէին զգլուխ նորա եղեգամբ․ և թքանէին զնա․ և ՚ի ծունր իջեալ երկիր պագանէին նմա ։ Եւ իբրև կա-

կատակեցին զնա , մերկացուցին
ի նմանէ զծիրանին ․ եւ զգեցու-
ցին նմա զիւր հանդերձն եւ ած-
ին զնա արտաքս , զի ի խաչ հա-
նիցեն զնա ։ Եւ բռնադատեցին
զՍիմոն Կիւրենացի որ ընդ այն
անցանէր եկեալ յագարակէ ․
զհայրն Աղեքսանդրի եւ Ռուփայ ․
զի բարձցէ զխաչ նորա ։ Եւ
ածին զնա ի Գողգոթայ տեղի մի ,
որ թարգմանեալ է' տեղի Կառա-
փելոյ ։ Եւ տային նմա ըմպել
զմռսեալ գինի' եւ ոչ էառ ։
Եւ իբրեւ խաչեցին զնա' բաժա-
նեցին զհանդերձս նորա ․ արկեալ
վիճակս ի վերայ թէ ո զինչ առ-
նուցու ։ Եւ էր ժամ երրորդ'
եւ հանին զնա ի խաչ ։ Եւ էր
վերագիր պատճառի նորա գրեալ
Թագաւոր Հրէից ։ Եւ ընդ նմա
հանին ի խաչ երկուս աւազակս ․
մի ընդ աջմէ նորա' եւ մի ընդ ահե-
կէ ։ Եւ լցաւ գրածն որ ասէ ,
եւ ընդ անօրէնս համարեցաւ ։ Եւ
որք անցանէին , հայհոյէին զնա ,
շարժէին զգլուխս իւրեանց' եւ
ասէին ․ վա՜հ' որ քակէիր զտա-
ճարն' Այ եւ զերիս աւուրս շի-
նէիր ։ Ապրեցո զանձն քո' եւ էջ
ի խաչէդ ։ Նոյնպէս եւ քահանայա-

պետքն այպն արկանէին ընդ միմեանս
հանդերձ դպրօքն՝ ասէին , զայլս
ապրեցոյց՝ զանձն ոչ կարէ ապրե-
ցուցանել : Քս արքայդ Իսրայէ-
լի . իջցէ այժմ ՚ի խաչէ անտի , զի
տեսցուք և հաւատասցուք դմա ,
և որք ընդ նմա ՚ի խաչին ելեալ
էին՝ նախատէին զնա : Եւ իբրև
եղև ժամ՝ վեցե՝ խաւարեաց երկին յա-
մենայն երկիր մինչև ցինն ժամ :
Եւ յիններորդ ժամուն աղաղա-
կեաց Յս ՚ի ձայն մեծ և ասէ .
Էլի Էլի լամա սաբաքթանի . որ
թարգմանեալ է . ԷԼ իմ ԷԼ իմ .
ընդ էր թողեր զիս : Եւ ոմանք
՚ի կացելոցն՝ որք շուրջն կային զնո-
վաւ՝ լուեալ խօսսն , ասէին զԵղի-
աս կոչէ դա : Եւ ընթացեալ
մի ոմն երկեալ սպունգ մի քացախով .
և հարեալ շուրջ եղեղան մատ-
ուցանէր . և ասէր՝ թոյլ տուք տես-
ցուք , եթէ գայ Եղիաս իջուցանել
զդա : Եւ Յս աղաղակեաց ձայնիւ
մեծ՝ եհան զոգի : Եւ վարա-
գոյր տաճարին պատառեցաւ յեր-
կուս , ՚ի վերուստ մինչև ՚ի խո-
նարհ : Եւ տեսեալ Հարիւրա-
պետին՝ որ ՚ի դէմ նորա կայր եթէ
այսպէս աղաղակեալ եհան զո-
գի , ասէ . արդարև այրս այս
որդի

որդի ԱՅ էր ։ Էին իսկ և կանայք՝ որք հայէին ՚ի հեռաստանէ ․ յորս էր Մարիամ՝ Մագդաղենացի ․ և Մարիամ՝ Յակոբու փոքուն և Յովսեայ մայրն , և Սաղոմէ ։ Որք յորժամ էին ՚ի Գալիլեա գնային զհետ նորա , և սպասաւորէին նմա , և այլք բազումք կանայք՝ որք ընդ նմա իսկ ելեալ էին Յերուսաղէմ ։

Եւ իբրև երեկոյ եղև՝ ( քանզի էր փարասկեւէ որ է՝ , յառաջուն շաբաթօրին ։ ) Եկեալ Յովսէփ՝ որ Յարիմաթեացւոց էր ․ այր ազնիւ նախարար , որ և ինքն իսկ ակնկալու էր արքայութեան ԱՅ ։ և համարձակութեամբ եմուտ առ Պիղատոս , և խնդրեաց զմարմինն Յի ։ Իսկ Պիղատոս զարմանայր թէ այնչափ վաղ մեռաւ ․ և կոչեալ առ ինքն զհարիւրապետն , եհարց զնա թէ արդարև՝ այնչափ վաղ մեռաւ ։ Եւ իբրև ստուգեաց ՚ի հարիւրապետէն՝ անտի , շնորհեաց զմարմինն Յովսեփայ ։ Եւ Յովսէփ գնեաց կտաւ՝ և իջուցեալ զնա պատեաց կտաւովն , և եդ ՚ի գերեզմանի ․ որ էր փորեալ ՚ի վիմէ , և թաւալեցուցեալ վէմ մի ՚ի դուռն գերեզմանին ։



ՍԲ ՂՈՒԿԱՍ·

# ՉԱՐՉԱՐԱՆՔ ՏԵԱՌՆ

## Մերոյ Յի Քի բստ Ղուկ.

Կայ . գլուխ ԻԲ.

Մերձենայր տօնի բաղարջակերացն որ կոչէր Պասեք ։ Եւ խնդրէին քահանայապետքն և դպիրք թէ որպէս սպանանիցեն զՅս . բայց երկնչէին ի ժողովրդենէ անտի ։ Մտանէր սատանայ ի Յուդայ ի կոչեցեալն Իսկարիովտացի , որ ի երկոտասանիցն ։ Եւ չոգաւ՝ և խօսեցաւ ընդ իշխանս քահանայից , և ընդ սպասաւորս թէ որ պէս մատնեսցէ զնա նոցա ։ Եւ խնդացին , և խոստացան տալ նմա արծաթ ։ Եւ յանձն առ , և խնդրէր պատեհ մատնել զնա նոցա առանց ամբոխի ։ Եկն օր բաղարջակերացն , յորում հարկ էր զենուլ զՊասեքն ։ Եւ առաքեաց

զՊետրոս , և զՅովհաննէս՝ և ասէ . Երթայք , պատրաստեցէ՛ք մեզ զՊասեքն՝ զի կերիցուք : Եւ նոքա ասեն , ուր կամիս՝ զի պատրաստեսցուք : Եւ ասէ ցնոսա , ահա իբրև մտանիցէք ՚ի քաղաքն , պատահեսցէ ձեզ այր մի սափորաւ ջուր՝ երթիջիք զհետ նորա ՚ի տունն , յոր մտանիցէ : Եւ ասասջիք ցտանուտէրն ասէ , Վարդապետն ասէ քեզ , ո՞ւր է իջաւանն , յորում զՊասեքն ուտիցեմ աշակերտօքս հանդերձ : Եւ նա ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ զարդարեալ՝ և անդ պատրաստեսջի՛ք : Եւ չոգացեալ գտին , որպէս և ասաց նոցա , և պատրաստեցին զՊասեքն : Եւ իբրև ժամ եղև , բազմեցաւ , և երկոտասան Առաքեալքն ընդ նմա : Եւ ասէ ցնոսա . ցանկութեամբ ցանկացայ զայս Պասեք ուտել ընդ ձեզ՝ մինչ չև չարչարեալ իցեմ : Բայց ասեմ ձեզ , թէ ոչ ևս կերայց ՚ի նմանէ՝ մինչև լցցի յարքայութեան Այ : Եւ ընկալեալ բաժակ գոհացաւ , և ասէ՝ Առէք զայդ՝ և բաժանեցէք ՚ի ձեզ : Ասեմ ձեզ՝ թէ յայսմ հետէ ոչ արբից ՚ի բերոյ այգւոյ՝ մինչև եկեսցէ արքայութիւն Այ :

Եւ

Եւ առեալ հաց գոհացաւ , և եբեկ՝ և ետ նոցա՝ ասելով . Այս է մարմին իմ , որ վասն ձեր տանիմ , զայս արասջիք ի յիմ յիշատակի : Նմանապէս և զբաժակն յետ ընթրեացն ասելով : Այս բաժակ է՝ նոր ուխտ ՚ի յիմ արիւն որ վասն ձեր հեղանի : Բայց ահաւասիկ ձեռն մատնչի իմոյ ընդ իս է ՚ի սեղանն : Եւ որդի մարդոյ , ըստ սահմանելոյն երթայ . բայց վայ մարդոյն այնմիկ յորմէ ձեռն մատնեսցի : Եւ նոքա սկսան խնդրել ընդ միմեանս թէ ով իցէ ՚ի նոցանէ՝ որ զայն գործելոց իցէ : Եւ եղև հակառակութիւն ՚ի մէջ նոցա , թէ ով ՚ի նոցանէ համարիցի դոլ մեծագոյն : Եւ ասաց ցնոսա , Թագաւորք Ազգաց տիրեն նոցա , և որք իշխեն նոցա՝ բարերարք կոչին : Այլ դուք ոչ այնպէս , այլ որ մեծագոյնն է՝ ՚ի ձեզ՝ եղիցի իբրև զկրտսերն , և որ առաջնորդ է իբրև զպաշտօնեայն : Քանզի ո՞վ է՝ մեծագոյն , բազմականն եթէ սպասաւորն , ոչ ապաքէն բազմականն . բայց ես եմ՝ ՚ի միջի ձերում՝ իբրև սպասաւոր : Եւ դուք էք՝ որք կացէք ընդ իս ՚ի փորձութիւնս իմս : Եւ ես

ուխ֊

ուխտեմ ձեզ՝ որպէս Հայր իմ ուխտեաց ինձ արքայութիւն : Զի ուտիցէք, և ըմպիցէք 'ի սեղանի իմ՝ յարքայութեան իմում. և նստիջիք 'ի վերայ աթոռոց դատել զերկոտասան ազգն Իսրայէլի : Եւ ասէ Տր. Սիմոն, Սիմոն, ահա սատանայ խնդրեաց զձեզ խարբալել իբրև զցորեան : Այլ ես աղաչեցի վասն քո՝ զի մի՛ պակասեսցի հաւատ քո, և դու երբեմն դարձեալ՝ հաստատեա՛ զեղբարս քո : Եւ նա ասաց ցնա. Տր. ընդ քեզ պատրաստ եմ և 'ի բանտ և 'ի մահ երթալ : Եւ նա ասաց ցնա. ասեմ քեզ Պետրէ, չիցէ այսօր հաւու խօսել՝ մինչ երիցս ուրասցիս զիս չգիտել : Եւ ասաց ցնոսա. յորժամ առաքեցի զձեզ առանց քսակի՝ և մախաղի՝ և կօշկաց՝ մի՛թէ պակասեցաւ ինչ ձեզ : Եւ նոքա ասացին՝ ոչ ինչ : ուրեմն ասաց նոցա, այլ այժմ որ ունի քսակ բարձցէ՝ նոյնպէս և մախաղ, և որ ոչն ունի՝ վաճառեսցէ զհանդերձ իւր՝ և գնեսցէ սուսեր : Ասեմ ձեզ, զի այս ևս որ գրեալ է՝ պարտ է զի կատարեսցի յիս, և ընդ անօրէնս համարեցաւ. զի որ վասն իմ ինչ

Են

է՝ կատարած ունի ։ Եւ նոքա ա-
սացին . Տէր՝ աՀաւասիկ են աստ
երկու սուսերք . և նա ասաց ցնո-
սա բաւական է ։ Եւ ելեալ
գնայր ըստ սովորութեան ՚ի լե-
առն ձիթենեաց . գնային զՀետ
նորա և աշակերտքն ։ Իբրև եՀաս
՚ի տեղին , ասաց ցնոսա . յաղօթս
կացէք չմտանել ՚ի փորձութիւն ։
Եւ ինքն մեկնեցաւ ՚ի նոցանէ
իբրև քարընկեց մի , և եդ ծունր
կայր յաղօթս . Եւ ասէր՝ Հայր
եթէ կամիս՝ անցո զբաժակս զայս
յինէն . բայց ոչ իմ կամքս այլ քոյդ
լիցի ։ Եւ երևեցաւ նմա Հրեշ-
տակ յերկնից՝ և զօրացուցանէր
զնա , և էր ՚ի տագնապի , և
մտադիւրութբ եւս կայր յաղօթս ։
Եւ եղեն քրտունք նորա իբրև
թրոմբք արեան , Հոսեալ յեր-
կիր ։ Եւ մինչ յարուցեալ էր
յաղօթիցն , և եկեալ առ աշակեր-
տսն , եգիտ զնոսա ՚ի քուն ՚ի
տրտմութենէն ։ Եւ ասէ ցնոսա .
զի՞ ննջէք . արիք , կացէք յա-
ղօթս՝ զի մի մտանիցէք ՚ի փոր-
ձութիւն ։ Եւ մինչդեռ նա խօսէր,
աՀաւասիկ ամբոխ , և որ կոչէրն
Յուդա մի յերկոտասանիցն առա-
ջնորդէր նոցա . մերձեցաւ Յի-
սու

զի համբուրեսցէ զնա ։ Իսկ Յս
ասաց ցնա՝ Յուդա՛, համբուրիւ
մատնես զորդի մարդոյ ։ Իբրեւ
տեսին, որք զնովաւն էին՝ որ ինչ
եղեւ · ասացին ցնա · Տէ՛ր, եթէ
հարցուք զնոսա սրով ։ Եւ է-
հար մի ոմն 'ի նոցանէ զքահանա-
յապետին ծառայ, և ի բաց եհան
զաջոյ ունկն նորա ։ Պատասխա-
նի ետ Յս՛ և ասէ, թոյլ տուք
մինչև ցայդ վայր, և մատուցեալ
յունկն նորա բժշկեաց զնա ։ Եւ
ասաց Յս ցեկեալսն 'ի վերայ նորա
զքահանայապետսն և զիշխանսն
տաճարին՝ և զծերս · իբրև 'ի վե-
րայ աւազակի ելէք սուսերօք և
բրօք ։ Մինչ հանապազ ընդ
ձեզ էի 'ի տաճարին, և ոչ ձգե-
ցիք ձեռս յիս, այլ այս է՛ ձեր
ժամ, և իշխանութիւն խաւարի ։
Եւ կալեալ զնա ածին 'ի տուն քա-
հանայապետին, իսկ Պետրոս եր-
թայր զհետ 'ի հեռաստանէ ։ Իբրև
լուցին զկրակ 'ի մէջ գաւթին, և
նստան շուրջ · էր Պետրոս 'ի մէջ
նոցա ։ զոր մինչ տեսանէր աղախին
մին որ 'նստէր առ լոյսն · հայեցաւ
ընդ նա և ասաց, և սա ընդ նմա
էր՝ ։ Իսկ Պետրոս ուրացաւ զնա
և ասէ · ոչ ճանաչեմ՛ զնա կին դու ։

Եւ

Եւ յետ սակաւ միոյ այլ ոմն տե-
սանելով զնա ասաց, և դու ՚ի
նոցանէ ես. և Պետրոս ասէ՝ այր
դու չեմ: Եւ իբրև ժամ մի եղեալ
՚ի միջոյ, այլ ոմն պնդէր և ասէր-
ստուգիւ և սա ընդ նմա էր, քանզի
Գալիլեացի է: Եւ ասէ Պետրոս,
այր դու, չգիտեմ զինչ խօսիս:
և առժամայն մինչ դեռ զայն ա-
սէր՝ խօսեցաւ հաւ: Դարձաւ
Տէր, և հայեցաւ ՚ի Պետրոս, և
յիշեաց Պետրոս զբանն Տեառն, որ-
պէս ասացեալ էր նմա թէ մինչ
չև հաւ խօսեալ իցէ, երիցս
ուրասցիս զիս: Եւ ելեալ ար-
տաքս Պետրոս լայր դառնապէս:
Եւ արքն, որք ունէին զնա,
այպն առնէին զնմանէ. և հարկա-
նէին: Եւ քօղեցին զնա և ածա-
ծէին զերեսս նորա. և հարցա-
նէին զնա և ասէին. Մարգարէա-
ցի՛ր՝ ով է որ եհար զքեզ: Եւ
այլ բազում ինչ հայհոյութիւն խօ-
սէին ՚ի նա: Եւ իբրև այգ եղև,
ժողովեցան ծերակոյտ ժողովրդեա-
նն, և քահանայապետքն, և
դպիրք. և ածին զնա յատեանն
իւրեանց. և ասեն, Թէ դու ես
Քրիստոսն, ասա մեզ: Ասէ ցնոսա.
Եթէ ասացից ձեզ՝ ոչ հաւատա-

տայք

տանիցիս ինձ ։ Եւ եթէ հարցանէք ինչ զձեզ՝ չասէք ինձ պատասխանի, կամ արձակիցէք ։ Բայց յայսմհետէ նստցի որդի մարդոյ ընդ աջմէ զօրութեանն Այ ։ Եւ ասացին ամենեքեան . ապա դու ես Որդին Այ, և նա ասէ ցնոսա, դուք ասէք թէ ես եմ ։ Եւ նոքա ասացին, զինչ եւս պիտոյ է՝ մեզ վկայութեան, զի մեզէն լուաք ի բերանոյ դորա ։ Եւ յարուցեալ ամենայն բազմութիւն նոցա, ածին զնա առ Պիղատոս ։ Եւ սկսան չարախօս լինել զնմանէ ասելով ։ Գտաք զսա, զի թիւրէր զազգս մեր ։ և արգելոյր ի տալոյ հարկս Կայսեր . և ասէր զանձնէ՝ թէ ինքն է՝ Քս Թագաւոր ։ Իսկ Պիղատոս եհարց զնա ասելով Դու ես Թագաւորն Հրէից ։ Նա պատասխանեալ ասէ . դու ասես ։ Եւ Պիղատոս ասէ ցքահանայապետսն և ցամբոխն ։ գտանեմ ինչ վնաս յառնդ յայդմիկ ։ Եւ նոքա սաստկանային և ասէին, եթէ խռովէ զժողովուրդս . ուսուցանելով ամենայն Հրէաստան, սկսեալ ի Գալիլեէ մինչև ցայսր ։ Իսկ Պիղատոս իբրև լուաւ զԳալիլեէ, եհարց

եհաս եւ եթէ Գաղղիացւոյն իցէ այսպէս: եւ իբրեւ զխաւս եթէ ՚յիշխանութ-եան Հերովդէսի է, ետ առնել զնա առ Հերովդէս, որ եւ նա Յերու-սաղէմ էր ՚յաւուրսն յայնոսիկ: Եւ Հերովդէս իբրեւ ետես զՅիսուս, ուրախ եղեւ յոյժ. զի ցանկայր ՚ի բազում ժամանակաց տեսանել զնա. վասն լսելոյ էր բազում ինչ զնմանէ. եւ ակնունէր ՚նշան ինչ լինել տեսանել ՚ի նմանէ: Հար-ցանէր զնա բանիւք բազմօք. եւ նա ոչ ինչ տայր նմա պատասխանի: Կային քահանայապետքն եւ դպիրքն եւ ստէպ ստէպ չարախօսէին զնմա-նէ: Արհամարհեաց զնա եւ Հե-րովդէս հանդերձ իւրովք զաւրակա-նօքն, եւ այպն արարեալ եզգեց զնովաւ հանդերձս սպիտակս, եւ ետ տանել անդրէն առ Պիղատոս: Եւ եղեն բարեկամք Հերովդէս եւ Պիղատոս յաւուր յայնմիկ. քանզի յառաջ թշնամութիւն մեծ էր միմեանց: Իսկ Պիղատոս կոչեաց զքահանայա-պետսն, եւ զիշխանսն, եւ զժողո-վուրդն: Եւ ասաց ցնոսա, ածէք առ իս զայրդ զայդ իբրեւ զխոտորեցուցիչ ժողովրդեանն, եւ ահաւասիկ ես առաջի ձեր հար-ցաքննեցի, ոչ ինչ պատճառ գտանեմ

յառն

՚ի մտն յայսմիկ՝ ՚ի այնպանէ գորո-
ծոյ չարչարանօքս զդմանէ :
Այլ և ոչ Հերովէս , քանզի ա-
ռաքեալ զձեզ առ նա , և ար-
ձեզէն մահու արժանի է՝ գործեալ
դորա : Խրատեցից ուրեմն զդա ,
և արձակեցից : Զի հարկ էր
մի բան ամուր տօնի արձակել
նոցա : Եւ աղաղակեաց ամենայն
ամբոխն խմբովին ասելով Բարձ
զդա և արձակեա մեզ զԲա-
րաբբայ : Որ էր վասն խռովու-
թեան իրիք եղելոյ ՚ի քաղաքին և
սպանութեան մնալով ՚ի բանտ :
Եւ դարձեալ Պիղատոս խօսեցա-
ւ ընդ նոսա կամելով արձակել զՅս :
Իսկ նոքա անդրէն աղաղակեին և
ասէին ՚ի խաչ հան ՚ի խաչ հան
զդա : Եւ նա երիցս անգամ ցնոսա
զինչ չար արար սա : զոչինչ
պատճառ մահու գտանեմ ՚ի սմա :
Խրատեցից ուրեմն զդա , և ար-
ձակեցից : Եւ նոքա ստիպէին
մեծամեծ ձայնիւ , և խնդրէին զնա ՚ի
խաչ հանել , և զօրանային բար-
բառք նոցա : Եւ Պիղատոս հա-
ճեցաւ առնել զխնդրուածս նո-
ցա : Արձակեաց նոցա զԲարաբ-
բայն , զոր վասն խռովութեան և
սպանութեան արկեալ էր ՚ի բանտ՝

զոր

զոր խնդրէին , և զՅս մատնեաց
կամաց նոցա : Եւ իբրև տանէին
զնա ըմբռնեցին զոմն Սիմոն Կիւ_
րենացի որ գայր յագարակէ . եդին
ի վերայ նորա զխաչն բառնալ զհետ
Յի : Եւ երթայր զհետ նորա
բազում ամբոխ ժողովրդեան ,
և կանանց . որք կոծէին , և ողբա_
յին զնա : Եւ դարձաւ Յս առ
նոսա ասաց : Դստերք Երուսաղեմի
մի լայք ի վերայ իմ , այլ լացէք ի
վերայ անձանց և ի վերայ որդւոց
ձերոց : Զի ահա եկեսցեն աւուրք
յորս ասիցեն : Երանի ամլոց և
որովայնից որ ոչ ծնան , և ստե_
անց . որք ոչ դիեցուցին : Յայն_
ժամ սկսանիցին ասել լերանց թէ
անկերուք ի վերայ մեր , և բլրոց
թէ ծածկեցէք զմեզ : Զի եթէ
ընդ փայտ դալար զայս առնեն ,
ընդ չորն զինչ լինիցի : Ածէին և
այլ երկուս չարագործս , սպանա_
նել ընդ նմա : Իբրև չոգան ի տե_
ղին կոչեցեալ Գագաթն . անդ
խաչեցին զնա : և զչարագործսն
զմին ընդ աջմէ և զմիւսն ընդ_
ձախմէ : Իսկ Յս ասէր . Հայր ,
թող դոցա , զի ոչ գիտեն զինչ
գործեն , և բաժանեալ զհանդեր_
ձս նորա արկին վիճակս : Եւ կայր
ժո_

ժողովուրդն հայեցեալ ։ անդոս-
նէին զնա և իշխանքն հանդերձ
նոքօք՝ և ասէին ։ զայլս ապրեցոյց ,
ապրեցուսցէ և զանձն եթէ դա է՛
Քս ․ Այլ ընտրեալն ։ Այպն
առնէին զնա և զինուորքն ։ Եկեալ
առաջի մատուցանէին նմա քացախ ։
Եւ ասէին․ Եթէ դու ես Թագաւո-
րն Հրէից՝ փրկեա՛ զքեզ ։ Եւ
էր մակագիր գրեալ 'ի վերայ նո-
րա ․ գրով Յունարէն , Լատինե-
րէն , և Եբրայեցերէն ․ Սա է
Արքայն Հրէից ։ Իսկ միւսն 'ի
կախելոց աւազակացն հայհոյէր
զնա , և ասէր ․ Եթէ դու ես Քսն ։
փրկեա՛ զանձն քո , և զմեզ ։ Եւ
Պատասխանեալ միւսն սաստէր
նմա և ասէր ․ և ոչ դու երկնչիս
յԱծ՝ զի 'ի նմին պատժի կաս ։
Եւ մեք յիրաւի արդարապէս , զի
արժանի որոց գործեցաքն՝ առ-
նումք ․ և սա աւելորդ ինչ ոչ գոր-
ծեաց ։ Եւ ասէր ց Յս ․ յիշեա
զիս Տր՝ յորժամ գաս յարքա-
յութն քո ։ Եւ ասաց ցնա Յս ։
Ամէն ասեմ քեզ ․ Այսօր ընդ իս
լինիս 'ի դրախտին ։ Եւ էր իբրև
վեցերորդ ժամ ․ և խաւար եղև
'ի վերայ ամենայն երկրի մինչև
ցիններորդ ժամ ։ և խաւարեցա-

արև

արեգակն : Եւ հերձաւ վարագոյր տաճարին ընդ մէջ : Եւ կարդա_ ցաւ Յս ՚ի ձայն մեծ՝ ասէ : Հայր՝ ՚ի ձեռս քո աւանդեմ զոգի իմ : և զայս ասացեալ՝ եհան զոգի : Եւ տեսեալ հարիւրապետին՝ որ ինչ եղեւ՝ փառաւոր արար զԱծ՝ և ասէ , արդարեւ այրս այս արդար էր : Եւ ամենայն ամբոխին նոցա որք ՚ի միասին ամփոփեալին , և տեսա_ նէին զանելիքն զայն՝ և զօրըն . բախէին զկուրծս՝ իւրեանց և դառնային : Կային և ամենայն ծա_ նօթքն նորա ՚ի հեռաստանէ : և կանայք , որք եկեալ էին զհետ նորա ՚ի Գալիլեէ՝ տեսանէին զայն :

Եւ ահա այր մի անուամբ Յովսէփ , որ էր նախարար՝ այր բարե_ գործ և արդար : Սա չէր միաբա_ նեալ ընդ խորհուրդս և ընդ գոր_ ծս նոցա : Յարեմաթեա քաղաքէ Հրէից : որ և ինքն իսկ ակնկալու էր արքայութեան Այ : Սա մատուցեալ առ Պիղատոս և խնդրեաց զմար_ մինն Յի : Եւ իջուցեալ զնա պատա_ տեաց սպիտակ կտաւով : և եդ ՚ի կռածոյ գերեզմանի . ուր չէր բնաւ ոք եդեալ :



ՍԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ·

# ՉԱՐՉԱՐԱՆՔ ՏԵԱՌՆ

## Մերոյ Յի Քի ըստ Յո-հաննու. գլուխ ԺԸ

Յայնմ ժամանակին: Ել Յս, աշակերտօքն հան-դերձ յայնկոյս ձո-րոյն կեդրոնի. ուր էր պարտէզ, յոր եմուտ ինքն եւ աշա-կերտքն իւր: Գիտէր եւ Յուդաս, որ զնա մատնելոց էր՝ զտեղին: զի բազում անգամ ժողովեալ էր անդր Յս աշակերտօքն հանդերձ: Եւ Յուդայի առեալ ընդ իւր զգունդն եւ 'ի քահանայապետիցն եւ 'ի փարիսեցւոցն սպասաւորս, գայ անդր ջահիւք՝ եւ լապտերօք՝ եւ զինուք: Իսկ Յս գիտէր զամենայն եկեալ 'ի վերայ նո-րա, ել եւ ասաց ցնոսա: զո՞ խնդ-րէք: Պատասխանի ետուն նմա զՅս Նազովրեցի: ասէ ցնոսա Յս, Ես եմ: կայր ընդ նոսա եւ Յուդաս՝ որ մատնելոցն զնա: Իբրեւ ասաց ցնոսա՝ Թէ Ես եմ, յետս յետս չո-

ցան՝ և անկան գետնի : Դար-
ձեալ եհարց զնոսա : զո՞ խնդրէք
նոքա ասացին , զՅս̄ Նազովրեցի :
Պատասխանի ետ նոցա Յս̄՝ ասա-
ցի ձեզ թէ ես եմ : արդ՝ եթէ
զիս խնդրէք՝ թոյլ տուք դոցա եր-
թալ : Զի լցցի բանն՝ զոր ասաց ,
թէ զոր ետուր ինձ՝ ոչ կորուսի
ի նոցանէ և ոչ զոք : Իսկ Սիմոն
Պետրոս քանզի ունէր սուր ,
ձգեաց զնա , և եհար զքահանա-
յապետին ծառայ՝ և եհատ զա-
կանջն նորա զաջոյ : և էր անուն
ծառային Մաղքոս : Ասաց ուրեմն
Յս̄ ցՊետրոս : արկ զսուրդ ան-
դրէն ի պատեան իւր : զԲա-
ժակն , զոր ետ ինձ Հայր՝ ոչ ըմ-
պիցեմ զնա : Իսկ զօրն ,
և հազարապետն , և սպասաւորքն
Հրէից կալան զՅս̄ և կապեցին
զնա : Եւ ածին զնա նախ առ
Աննա որ էր աներ Կայիափայի :
որ քահանայապետն էր տարւոյն
այնորիկ : Եւ այն Կայիափայ էր՝
որ խրատն ետ Հրէից : եթէ լաւ
է՝ առն միում մեռանել վասն ժո-
ղովրդեանն : Եւ երթային զհետ
նորա Սիմոն Պետրոս՝ և միւս ա-
շակերտն : և աշակերտն այն քան-
զի ծանօթ էր քահանայապետին՝

եմուտ

եմուտ ընդ Յի՛ 'ի գաւիթ քահա_
նայապետին : Եւ Պետրոս կայր
առ դրանն արտաքոյ : Ել միւս
աշակերտն որ էր ծանօթ քահա_
նայապետին՝ և ասաց դռնապանին
և եմոյծ 'ի ներքս զՊետրոս :
Ասէ աղախինն այն որ դռնա_
պանն էր՝ ցՊետրոս : Միթէ և
դու յաշակերտաց առնն այնորիկ
իցես : և նա ասէ՝ ոչ եմ : Կային
անդ ծառայքն և սպասաւորքն խա_
րոյկ արկեալ՝ քանզի ցուրտ էր՝ և
ջեռնուին : կայր ընդ նոսա և Պե_
տրոս և ջեռնոյր : Եւ քահանա_
յապետն եհարց զՅս՝ վասն աշա_
կերտացն՝ և վասն վարդապետու_
թեանն նորա : Պատասխանի ետ նմա
Յս : Ես յայտնապէս խօսեցայ
յաշխարհի : Ես յամենայն ժամ
ուսուցի 'ի ժողովրդեանն . և 'ի
տաճարին անդ՝ ուր ամենայն Հրէ_
այքն ժողովեալ էին. և 'ի ծածուկ
ինչ ոչ խօսեցայ : Զի՞ հարցանես
զիս . հարց զայնոսիկ՝ որք լուանն,
թէ զի՞նչ խօսեցայ ընդ նոսա : ահա_
ւասիկ նոքա գիտեն զինչ խօսեցայ
ես : Իբրև զայս ասաց . միոյն
'ի սպասաւորացն՝ որ անդ կայր .
եհար ապտակ Յի՝ և ասէ : այդ_
պէս պատասխանի տաս քահանա_

յարգեանց ։ Եւ Յիս ասէ ցնա ։
եթէ չար ինչ խօսեցայ՝ վկայեա
վասն չարին ։ Իսկ եթէ բարի ,
ընդէ՞ր հարկանես զիս ։ Եւ առա–
քեաց զնա Աննաս կապեալ առ Կայ–
իափայ քահանայապետն ։ Եւ Սիմոն
Պետրոս կայր անդ՝ և ջեռնոյր ։
ասացին ուրեմն ցնա. մի՞թէ և դու
յաշակերտաց նորա իցես ։
նա ուրացաւ և ասէ՝ ոչ եմ ։
Եւ ասէ մի ի ծառայից քա–
հանայապետին՝ ազգական այնո–
րիկ՝ զորոյ զունկն եհատ Պետ–
րոս ։ ոչ ես քեզ տեսի ընդ ի
պարտիզին ընդ նմա ։ Դարձ–
եալ ուրացաւ Պետրոս , և վաղ–
վաղակի հաւ խօսեցաւ ։ Եւ ածեն
զՅիսուս ի Կայիափայ յատեան
դատաւորին , և էր առաւօտ ։
և նոքա ոչ մտին յապարանսն , զի
մի պղծեսցին ։ այլ զի ուտիցեն
զՊասեքն ։ Ել առ նոսա Պիղատոս
արտաքս՝ և ասէ ։ զի՞նչ չարախօս–
ութիւն մատուցանէք զառնէդ զա–
յդմանէ ։ Պատասխանեցին և ասեն
ցնա ։ եթէ չէր չարագործ
այրն այն , ապա ոչ մատնէաք
զնա քեզ ։ Ասէ ցնոսա Պիղատոս ,
առէք զնա դուք , և ըստ ձերոց
օրինացն դատեցէք զնա ։ Ասացին
ցնա

ցնա Հրէայքն , Մեզ ոչ է արժան
սպանանել զոք : Զի բանն Յի.
զոր ասաց՝ նշանակելով՝ թէ որով
մահուամբ մեռանելոց իցէ : Եմուտ
դարձեալ՝ յապարանսն Պիղա-
տոս , կոչեաց զՅս՛ եւ ասէ ցնա :
Դու ես թագաւորն Հրէից :
Պատասխանի ետ Յս՛ . Ինքնին ա-
սես՝ եթէ այլք ասացին քեզ զինէն :
Պատասխանի ետ Պիղա-
տոս , միթէ եւ ես Հրեայ իցեմ :
Ազգն քո եւ քահանայապետքն մատ-
նեցին զքեզ ինձ : զի՞նչ գործե-
ցեր : Պատասխանի ետ
Յս՛ , իմ Արքայութիւն չէ յայսմ աշ-
խարհէ : եթէ յաշխարհէ աստի
էր արքայութիւնն իմ , սպասաւորքն
իմ մարտնչէին արդեօք՝ զի մի
մատնեցայց Հրէից : բայց արդ
թագաւորութիւնն իմ չէ՛ աստի :
Ասէ [illegible] ցնա Պի-
ղատոս : ապա ուրեմն արքայ ես իսկ .
թագաւոր ես դու : պատասխանի
ետ Յս՛ . Դու ասես թէ
թագաւոր եմ ես : Ես յայդ իսկ
ծնեալ եմ , եւ ի դորին իսկ եկեալ
եմ յաշխարհ՝ զի վկայեցից ճշմար-
տութեան : ամենայն որ ի ճշմար-
տութենէ է՝ լսէ բարբառոյ իմոյ :
Ասէ ցնա Պիղատոս : զի՞նչ է

Ճշմարտութեն ։ զայս ինքն ասաց,
դարձեալ ել առ Հրէայսն՝ և ասէ
ցնոսա ։ Ես՝ և ոչ մի ինչ պատ_
ճառս գտանեմ ՚ի նմա ։ Բայց է
ձեր սովորութիւն, որ զմի ար_
ձակեցից ձեզ ՚ի զատկին, արդ
կամիք՝ զի արձակեցից ձեզ զթա_
գաւորն Հրէից ։ Աղաղակեցին
ապա դարձեալ ամենեքեան՝ ա_
սելով ։ Մի՛ զդա այլ զԲարաբբայ,
և էր Բարաբբայն այն աւազակ ։
Յայնժամ էառ Պիղատոս զՅս̃՝ և
գանեհար ։ Եւ զինուորացն պսա_
կեալ զպսակ ՚ի փշոց՝ եդին ՚ի
գլուխ նորա, և զգեցուցին նմա
զհանդերձ ծիրանին ։ Եւ գային
առ նա, և ասէին, ողջ՛ լեր Արքայ
Հրէից ։ և տային նմա ապտակս ։
Ել դարձեալ Պիղատոս արտաքս՝
և ասէ ցնոսա ։ Ահա ածեմ զնա
արտաքս առ ձեզ ։ զի գիտասջիք
թէ ես պատճառս ինչ ՚ի նմա ոչ
գտանեմ ։ ( Ել Յս̃ արտաքս ․ և
ունէր զպսակն ՚ի փշոց և զհանդերձ
ծիրանին ։ ) և ասէ ցնոսա ։ Ահա
մարդ ։ Իբրև տեսին զնա քա_
հանայապետքն և սպասաւորքն ․
աղաղակ բարձին ասելով ․ ՚ի
խաչ հան ․ ՚ի խաչ հան զդա ։ ասէ
ցնոսա Պիղատոս ։ առէք զդա ՚ի
ձեզ,

ձեզ , և ձեզէն հանէք ՚ի խաչ : զի
ես ՚ի դմա պատճառ ինչ ոչ գտա-
նեմ : Պատասխանի ետուն նմա
հրէայքն : Մեք օրէնս ունիմք , և
ըստ օրինաց պարտի մեռանել :
զի զանձն իւր Որդի ԱՅ ա-
րար : Իբրև լուաւ զբանս զայս
Պիղատոս , առաւել երկեաւ :
Եմուտ դարձեալ անդրէն յապա-
րանսն , և ասաց ցՅս : ուստի ես
դու . և Յս ոչ ետ նմա պատաս-
խանի : Ասէ ցնա Պիղատոս , ընդ
իս ոչ խօսիս : ոչ գիտես եթէ իշ-
խանութիւն ունիմ հանել զքեզ ՚ի
խաչ , և իշխանութիւն ունիմ ար-
ձակել զքեզ : Պատասխանի ետ
Յս . ոչ ունէիր դու իշխանութիւն
՚ի վերայ իմ , և ոչ մի . եթէ ոչ էր
տուեալ քեզ ՚ի վերուստ : վասն
այսորիկ որ մատնեացն զիս քեզ՝ նո-
րա մեծագոյն մեղք են : Յայսմ հե-
տէ Պիղատոս խնդրէր արձակել
զնա , և Հրէայքն աղաղակէին ,
և ասէին . եթէ զդա արձակես՝
չես բարեկամ՝ կայսեր : քանզի
ամենայն որ որ՝ թագաւոր առնէ
զանձն իւր . հակառակ է կայսեր :
Իսկ Պիղատոս իբրև լուաւ զբանս
զայս , եհան զՅս արտաքս . և նըս-
տաւ ՚ի վերայ բեմին . ՚ի տեղւոջն որ

կուսէր Աստուածածնի , և երրորդ_
ցերէն Կարապետա : էր մեծ որ_
բունն գոմին : Եւ եր ծով լինե_
լեցուցող , և ամէն չհրեշտակն , ամե_
նապահար ձեր ցաւեղ : Եւ նորա
առաքեալքն , բայց ի մէջ , բայց
ի մէջ և հանն զոր ի խաչ : ամէն
յանուն Պիղատոսի , Եւ զ Քրիստո_
սոյց ձեր ի խաչ հանեցին : որ_
պատասխանի եսուան բարձրացուցե_
ալն : չէր մեր Քրիստոսի բայց
ի Կոյսերն : Յարեաւ նա զեա ի
ձեռաց նոցա , զի ի խաչ եհանեցին :
Եւ ամեն զՅս և ամենին : և
բարձեալ էր իրեններ զհանգստեա_
յնին , և եւ ի աջոյն որ ամէն Գա_
բրիէլն , և Երրորդութեան Հոգւո_
յն : Որ և ի խաչ խաչ հանեցին
զնա : և բազ նմա երկուս եւ այլ
ամենայն և ասաց , և ի մէջն զՅս :
Պարեաց և մարդկանց Պիղատոս , և
եւ ի մէջոյն խաչին , և եր զերեալ
Յս Նազովրեցի Քրիստոսի Հրեից :
Զայն մարդկանն ընթերցին բա_
զումք ի Հրէից : զի մօտ էր ի քա_
ղաք տեղւոյն ուր խաչեցաւն
Յս . և էր գրեալ Եբրայեցերէն ,
Յունարէն , և Լատիներէն : Ասէին
զ Պիղատոս քահանայապետքն Հր_
էից : մի գրեր Թագաւոր Հրէ_
ից .

էր . այլ յետ ինքն առաջ Թադէոսոր
եւ՛ Հրէից : Պատասխանի եւս
Փիլիպոսի , զոր ինչ գրեցի՛ գրե֊
ցի : Իսկ զինուորքն իբրեւ հանին
՚ի խաչ զՅիսուս , առին զհանդերձսն
նորա , (եւ արարին չորս մասունս ,
իւրաքանչիւր զինուորի մասն ) եւ
զպատմուճանն : Իսկ պատմուճանն՛
անկար էր առ ի վերուստ , ՚ի
վերայ անկանելեաւ ամենեւին .
Ասեն ցմիմեանս , մի՛ պատռես֊
ցուք զդա , այլ արկցուք
վիճակս ՚ի վերայ դորա՝ ում եւ
ելցէ . զի բանն կատարեսցի որ ասէ ,
բաժանեցին զհանդերձս իմ՝ յիւ֊
րեանս , եւ ՚ի վերայ պատմուճանի
իմոյ արկին վիճակ : Եւ զինուորքն
արարին զայս ինչ գործեցին : Եւ
կային առ խաչին Յիսուսի մայր նորա ,
եւ քոյր մօր նորա Մարիամ Կղեոպա֊
յայ , եւ Մարիամ Մագդաղենացի :
Յիսուս իբրեւ ետես զմայրն եւ զաշա֊
կերտն , զոր սիրէր , զի կայր մօտ ,
ասէ ցմայրն իւր , Կին դու , ահա
որդի քո : Ապա ասէ ցաշակերտն ,
ահա մայր քո , եւ յայնմ ժամանակէ
էառ աշակերտն զնա առ իւր :
Յետ այսորիկ գիտաց Յիսուս , եթէ
ամենայն ինչ կատարեալ է՛ , զի
կատարեսցի գիրն , ասէ , ծա֊

բանիւք : Եւ անդ կայր աման նոյն ըն՝ բազմօք, և նոցա ազատնցեալ բազմօք ընդ եղեալ՝ չարչեղեալ զինւոր զարդի մատուցին ՚ի բերան նորա : Երբե եւա Յօ զբազմին առաջ կատարեալ է, և խոնարհեցուցեալ զգլուխն աւանդեաց զոգին : Իսկ հրեայքն (քանզի Ուրբաթ էր) զի մի անդէն ՚ի խաչին ագանիցին մարմինքն մինչև ցշաբաթն. (զի էր օր մեծ շաբաթուն այնորիկ .) աղաչեցին զՊիղատոս, զի խորտակեսցեն զբարձս նոցա, և բարձցին : Եւ եկին զինուորքն, և զառաջնոյն խորտակեցին զբարձս : Նոյնպէս և զմիւսոյն որ ընդ նմա ՚ի խաչն ելեալ էր : Բայց յերբ եկին առ Յօ, և տեսին՝ զի այն նոյն մեռեալ էր, ոչ խորտակեցին զբարձս նորա : Այլ միոյն ՚ի զինուորացն տիգաւ եհար զկողս նորա, և վաղվաղակի ել արիւն, և ջուր . Եւ որ ետեսն, վկայեաց, և ճշմարիտ է՝ վկայութիւն նորա, և նա գիտէ եթէ ճշմարիտ ասէ, զի և դուք հաւատասջիք : Այս եղեւ՝ զի գիրն գրածն, ասէ մի՝ փշրեսցի ՚ի նմանէ : Եւ դարձեալ

միւս

մեր գրածն ասէ , եթէ հայեսցին ի նա յոր խոցեցինն :

Յետ այսորիկ աղաչեաց զՊիղատոս Յովսէփ , որ Յարիմաթեայ՝ բանզի աշակերտ էր Յի , ի ծածուկ՝ վասն ահին Հրէից : զի բարձցէ զմարմինն Յի , և եթող Պիղատոս . եկն ուրեմն և եբարձ զմարմինն Յի : Եկն և Նիկոդեմոս որ եկեալն էր առ Յս ի գիշերի զառաջինն , և եբեր զմուռս խառն ընդ հալուէս , իբրև լտերս հարիւր : Առին ուրեմն զմարմինն Յի , և պատեցին կտանօք և խնկօք համեմեօք : որպէս օրէն է Հրէից թաղել : Եւ էր ի տեղւոջն յորում խաչեցաւ՝ պարտէզ : և ի պարտիզին անդ գերեզման նոր , յորում ո՛չ ոք երբէք էր եդեալ : Անդ վասն ուրբաթուն Հրէից՝ զի մօտ էր գերեզմանն՝ եդին զՅս :

## Դաւանութիւն սրբոյն Աթանասի.

Որ ոք կամիցի փրկիլ յառաջ քան զամենայն · հարկէ ունել զընդհանուր ուղղափառս :

Զոր թէ ոք ոչ պահեսցէ ամբողջ և անարատ, առանց կասկածեաց կորիցէ յաւիտեան :

Իսկ հաւատն ուղղափառ այս է՝ զի երկրպագեսցուք զմի Ած ՚ի յերրորդութիւն և զԵրրորդութիւնն ՚ի մի Ածութիւն :

Ոչ շփոթելով զանձինսն, և ոչ բաժանելով զգոյացութիւն :

Զի այլ է՝ անձն Հօր, այլ Որդւոյ, այլ Հոգւոյն սրբոյ :

Բայց Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ, մի է՝ Ածութիւն, հաւասար փառք, և համայաւիտենական մեծափառութիւն :

Որպէս Հայր՝ նոյնպէս Որդի, նոյնպէս Հոգին սբ :

Անստեղծ Հայր · անստեղծ Որդի, անստեղծ Հոգին սբ :

Անչափ Հայր, անչափ Որդի, անչափ Հոգին սբ :

Յաւիտենական Հայր, յաւիտենական Որդի, յաւիտենական Հոգին սբ :

Բայց ոչ երեք յաւիտենականք , այլ մի յաւիտենական ։

Որպէս և ոչ երեք անստեղծք , և ոչ երեք անչափք , այլ մի անստեղծ , և մի անչափ ։

Նմանապէս ամենակարող Հայր , ամենակարող Որդի , ամենակարող Հոգին սբ ։

Բայց ոչ երեք ամենակարողք , այլ մի ամենակարող ։

Այսպէս Ած Հայր , Ած Որդի , Ած Հոգին սուրբ ։

Բայց ոչ երեք Ածք , այլ մի է Ած ։

Այսպէս Տր Հայր , Տր Որդի , Տր Հոգին սուրբ ։

Բայց ոչ երեք Տեարք , այլ մի է Տր ։

Զի որպէս առանձինն զիւրաքանչիւր իւր անձն Ած , և Տր խոստովանել՝ քրիստոնէական ճշմարտութենէ բռնադատիմք, նոյնպէս զերիս Ածս կամ զերիս Տեարս ասել՝ կաթողիկէ կրօնիւ արգելեալք եմք .

Հայր 'յումեքէ ոչ է՝ արարեալ , ոչ ստեղծեալ , և ոչ ծնեալ ։

Որդի 'ի Հօրէ միայնէ՝ ոչ արարեալ , ոչ ստեղծեալ , այլ ծնեալ ։

Հոգին սբ 'ի Հօրէ , և 'ի յՈրդւոյ ոչ արարեալ , ոչ ստեղծեալ ,

և

և ոչ ծնեցեալ , այլ բղխեալ ։
Ապա ուրեմն մի է Հայր , և ոչ երեք Հարք , մի է Որդի և ոչ երեք Որդիք , մի է Հոգին սբ , և ոչ երեք Հոգիք սուրբք ։
Եւ ի այս Երրորդութեան ոչ ինչ է յառաջ կամ յետոյ , ոչ ինչ մեծագոյն կամ փոքրագոյն , այլ բովանդակ երեք անձինքն համագոյակ_կիցք են յաւիտեան՝ և համահաւա_սարք ։
Այսպէս զի ամենայն , որպէս առ_աջն ի վերոյ ասացեալ է՝ և միու_թիւն ի Երրորդութիւն , և Երրորդու_թիւն ի միութիւն պաշտեալ լիցի ։
Ապա ուրեմն ամենայն որ ոք կամի փրկիլ , ի Երրորդութենէ այսպէս ծանիցէ ։
Բայց հարկաւոր է առ յաւիտենա_կան փրկութիւն , զի զՄարմնաւորու_թիւն ևս Տն մերոյ Յի Քի հաւատարմանայցէ ու հաւատասցէ ։
Իսկ արդ ուղղափառ հաւատն այս է , զի հաւատասցուք և խոս_տովանեսցուք , թէ Տր մեր Յս Քս Որդին Այ . Ած և մարդ է ։
Ած է ի գոյացութենէ Հօր յառաջ քան զյաւիտեանս ծնեալ , և մարդ է ի գոյացութենէ մօր ի աշխարհի ծնեալ ։

կատարեալ Ած և կատարեալ մարդ, 'ի բանաւորն հոգւոյ, և մարմնականին մարմնոյ ենթակայացեալ :

Հաւասար Հօր՝ ըստ Աստուածութեան, կրսեր քան զՀայր՝ ըստ մարդկութեան :

Որ թէպէտ Ած և մարդ է՝, բայց ոչ երկու՝ այլ մի Քս է :

Եւ մի՝ ոչ փոխարկութեամբ Ածութեան 'ի մարմին, այլ առմամբ մարդկութեան 'ի յԱծ :

Մի է՝ ամենևին ոչ շփոթմամբ գոյացութեան, այլ միութեամբ անձին :

Քանզի որպէս բանաւոր հոգին և մարմին մի մարդ է՝, սոյնպէս Ած և մարդ մի Քս է :

Որ չարչարեցաւ վասն մերոյ փրկութեան, էջ 'ի դժոխս, և 'յերրորդ աւուր յարեաւ 'ի մեռելոց :

Համբարձաւ 'ի յերկինս նստի ընդաջմէ Այ Հօր ամենակարողի, անտի գալոց է՝ դատել զկենդանիս և զմեռեալս :

'Ի յորոյ գալստեանն ամենայն մարդիկ յարուցեալ ունելոց են զմարմինս իւրեանց, և տալոց համար՝ ըստ իւրաքանչիւր գործոց իւրեանց :

Եւ որք զբարիս արարին՝ երթիցեն 'ի կեանս յաւիտենականս, իսկ

որք

որք զբարին՝ ի կեանսն յաւիտենից ։ Այս է՝ հաւատն կաթուղիկէ, զոր եթէ ոք հաւատարմաբար և հաստատապէս ոչ հաւատասցէ՝ փրկիլ ոչ կարիցէ ։

Հայր մեր՝ որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո ։ Եկեսցէ արքայութիւն քո ։ Եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի ։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր ։ Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց ։ Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն ։ այլ փրկեա զմեզ ի չարէ ։ Ամէն ։

Ողջոյն քեզ Մարիամ ։ լի՝ շնորհօք, Տէր ընդ քեզ ։ Օրհնեալ ես դու ի կանայս, և օրհնեալ է՝ պտուղ որովայնի քո Յիսուս ։ Սրբուհի Մարիամ՝ մայր ԱԾ, աղօթեա՝ վասն մեր մեղաւորացս այժմ՝, և ի ժամու մահուան մերոյ ։ Ամէն ։

Հաւատամ՝ յԱստուած Հայրն ամենակալն՝ արարիչն երկնի և երկրի ։ Եւ ի ՅՍ ՔՍ որդին նորա միածին Տէրն մեր ։ որ յղացաւ ի Հոգւոյն սրբոյ, ծնաւ ի Մարիամայ կուսէն ։ չարչարեցաւ ընդ

պոնտ

պետառաջով Պետրոսիւ , Յակով-
բաւ , Անդրէաս , և Թադէոսա : Եւ
ի գաւառս : յերկրպագեալ անուն
բարեաց ի մեծ երեկոյ : Համբարձման
յերկինս , նախ ընդ առաջի Ա-
Հօր ամենակալ... : Որովհետև գալ-
լոց է պատեալ զբնակութիւն և զմե-
ղաւորս : Համառօտ ի Որդին մէ :
ղմէ կանխ... երկրպագութիւն : զմի-
... : զթագաւորութի
... : զ...
ամենայն ժամանակաց : Ամէն :



Ուրախական խորհրդոց անուան-
ոց Ռօզարին :

Մին հայր մեր, Ժ. ողջոյն Մա-
րիամ՝ առաջի՝ խորհրդին զառաջին
խորհրդոյն ուրախութեան անուանեալ
Ռօզարին, երբ Աճ ամենակա-
րողն բան զղաւյան առաքեաց, առա-
քեալ զԳաբրիէլ հրեշտակապետն
ետ ողջոյն կուսին Մարիամու, եւ
յղացաւ ի Հոգւոյն սրբոյ :
Մին հայր մեր, Ժ. ողջոյն Մա-
րիամ՝ առաջի՝ խորհրդին երկրորդ
խորհրդոյն ուրախութեան, անուան-
ոց Ռօզարին, յորժամ Սրբուհի
կոյսն Մարիամ՝ յուղարկ, վասն թա-
նկի եղ ի բազուկն Յակոբ ի
տուն Զաքարիայ եւ ետ ողջոյն Ե-
ղիսաբեթի :
Մին հայր մեր, Ժ. ողջոյն Մա-
րիամ՝ առաջի՝ խորհրդին երրորդ
խորհրդոյն ուրախութեան, անուան-
ոց Ռօզարին, երբ եհաս ժա-
մանակ ծննդեան ամենասուրբ ծնո-
ղականն ծնաւ զՏէրն մեր Յս Քս
ի Բեթղեհէմ հրէաստանի ի քա-
ղաքի Դաւթի :
Մին հայր մեր, Ժ. ողջոյն Մա-
րիամ՝ առաջի՝ խորհրդին չորրորդ
խոր-

խորհրդոյն ուրախութեան մեծա-
ւոյ Պօղոսին , հրամն լսելն ան-
ուրին սրբութեան , բառ օրինացն
Մովսէսի , ամենայն զՅս յաւիտեան
մատնեալ Տէր և Սինէին եղաւ զերա ի
գերեզմանս և օրհնեաց զԱծ ամե-
նայն : Արդ արժանի եմք զմատուցել քե-
